



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Vjerec tří  
Unspokojení myslí

1905

84  
- 82

Erhard

84-3  
5-79

մը.

ԳՐԱՄԱՆԱՀ

# ՏԵՂԻԿՆԻ ՈՐԴԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՏՎԱԼԱՑ

25/1

Թ-բդ.  
Օ. ՊԵՐԵՎԱՆ.Ա.Տ.

№

Թ-ԱԿԲԵՋ

Առաջնա. Հայ. Թեմ. Տպարան-  
իկ. Եղիսաբէթ Միքարեզեանի

1905

19 NOV 2010

20 APR 2006

ԹԱՐԱՔԻԶԵՐ ԱՍՐՊՈԱԾՈՒՅՆԻ ՀԱՅԵՐԻ

ԹԵՄԱԿԱՆ ՏՊԱՐԵՆՈՒԹ ԴԱՎԻՇՈՒՄ Է

ԱՍՐՊԵՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Կ. ԿԱՐԻՑՅԱԿԻ - ԿՈՂՈՒՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ բարգ. Ռ. Խոնազատեամի. Երկու դուռ. ԽԱՆԱՋԱՆ-ԴՐԱՅԻՆ-ԶՄ Թէ ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄ  
Առումնախորհրդն տար օհ. տար կ. ՕՏԱՐ ՓԵԶԵՐ Բ. Հիւս, ՀԱՅԵՐԻՑ թարգ. Պարսկեանից Ա. Վ. Մատուդեամի. զիս է մէկ դասանք մինչ կոպ.

ԴԻՄԱԿՆԵՐ, ԵՐԳԻՆՄԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ Ա. Տ-Տ.  
զիս է — երես դու կամ լիսուն կոպ.  
Օ, ՃՐԵՑՆԵՐԻ ԱԵՐԱՐՁՆԵՐ ԹԱՐԳ. Ռ. Խ. ԵՒ  
Տ. Տ զիս է — տաճնին տաճի. կամ տաճնին կոպ.  
ՏԵՑԻՆԵՐ ՈՐԴԻՆ Վ. Վ. — ԹԱՐԳ. Ռ. ԽԱՆԱՋԱՆ  
զիս է մէկ դու, տաճ կոպ.

ԳՐԱՄԵՐ՝ TAURIS, A L' IMPRIMERIE DU  
DIOCÈSE ARMÉNIEN

Կարելի է դիմել նոյնպէս Թիմլիս Կենտրոնական  
և Գուշտենիք գրավանառանցներ:

ԱՐՏՈՎԻՆ ՆԻԿ

ԽՐ ՍԻՐԵԼԻ ԸՆԿԵՐ

ԱՍՐՊԵՏԻՆ

ԹԱՐԳԻՐՈՒԶԻՑ

03 JUL 2013

(XO)

0005 99A 05

# ՏԵՅԻՒՆԻ ԱՐԴԻՒՆ

ՁՐՈՅՑ

## I

1580 Թւականի փետրւար  
ամսին մի երիտասորդ լուսածէ-  
գին անցուում էր Անենետիկում  
պիացետացի վրայով։ Նրա հա-  
զուսոր անկարդ վիճակի մէջ էր,  
զլխարկը, որի վրան մի գեղեցիկ  
գունաւոր փետուր էր, ֆրֆրում,  
խրւած էր մինչև ականջները։  
Մեծմեծ բայլերով նա զնուում էր  
գեղի հսկաւուների եղերը, յե-  
տեից քարշ տալով թուրն ու  
բղաժնդը, և արհամարհանքով լոր

Էր տալիս զետնի վրայ պառկոտած ձկնորսների վրայից Պայլի կամուրջին հասնելով, նա կանգ առաւ և նայեց իր շուրջը: Առսինը մայր էր մանում օքիողեկիցի յետեր, և արշալցուր ոսկեզօծում էր գուրսների պալատը: Հարեան պալատից մերի ընդ մերի թանձր ծուխ ու փայլուն բոցեր էին դուրս ցայտում: Գերաներ, բարեր, մարմարինի ահազին կըտորներ, հազարաւոր բեկորներ լրդրցրել էին բանտերի ջրանցքը: Գեռ բոլորովին չմարած հրդեհը նոր էր խորակել ջրերի մէջ տեղում պատրիկի բնակարանը: Փամանակ ժամանակ կայծերի խուրձեր էին վեր բարձրանում և այդ աւերիչ լցոնի շնորհով մի զինոր էր նկատում հրազդանը ուսինին աւերակների մէջ հսկելու:

Բայց ինչպէս երկում էր մեր երիտասարդին չէր հետաքրքրում ոչ այդ աւերիչ տեսարանը, ոչ էլ երկնրի գեղեցկութիւնը, որ ամենամարմ ու նուրբ գոյներով էր լուսաւորւած: Նա մի քանի վայրիկեան հորիզօնին նայեց իբրև թէ կամենալով իր թորմոշած աչքերը հանգստացնել: Բայց բացւող օրւալցուր կարծես թէ նրան գուր չեկաւ, որովհետեւ նա, փաթաթելով քաղաքիդի մէջ, վազելով շարունակեց իր ճանապարհը: Ըստով նա դարձեալ կանգ առաւ մի պալատի գոան առաջ ու բաղնեց: Ծառան ճրագը ձեռքին բռնած իսկոյն բացեց գուրը:

Ներս մտնելիս շուռ եկաւ, կրկին մի հայեացը դիեց երկնրի վրա ու բացազանչեց. — Բաղրուլ կիսենա, որ ին

բարեկենդանը թանգ և նստում:

Այդ երիտասարդի անուն  
էր Պօֆպօնիօ Ֆիլիպպօ Վեցել-  
լիս. Դա Տիցիէնի երկրորդ որդին  
էր՝ մի խելօք ու հարուստ երեա-  
կայութեան տէր տղա, որի վրա  
հայրը ամենափառաւոր յայսեր էր  
զնում, սակայն խաղամոլութիւնը  
նրան տանում էր դէպի անվայել-  
կեանք:

Չորս տարի էր միայն, ինչ  
մեծանուն նկարիչը և եր մեծ որ-  
դին—Օրացիօն մեռել էին գրեթէ  
միաժամանակ և երիտասարդ Պի-  
պօն չորս տարւա ընթացքում այդ  
կրկնակի ժառանգութիւնից մա-  
ցած ահագին կարողութեան մի  
լաւ բաժինը արդէն վատնել էր:  
Փոխանակ ընութիւնից օժտւած իր  
տաղանգները զարգացնելու և եր  
անւան փառը պահպանելու, նա  
զորեկները ընելով էր անցկացնում:

Իսկ գիշերները խաղում էր մի ինչ  
որ իշխանուհի, կամ զռնէ իշխա-  
նուհի կոչող, Օրսինի-ի մօտ, որը  
Վենետիկի երիտասարդներին սը-  
նանկացնելը իր համար արհեստ  
էր գարձրել: Այդ տիկնոջ մօտ ու-  
մեն իրիկուն աղնւականներից ու  
կուրտիզաններից բաղկացած մի  
բազմամարդ խումբ էր հաւաք-  
ում: այնտեղ նրանք թէ ընթ-  
րում, թէ խաղում էին և, որով-  
հետեւ ընթրիքի համար ոչինչ չե-  
ին վճարում, ուստի, հասկանալի է,  
որ ընակարանի տիրոջ՝ վարձատ-  
րելու հոգուը զարերին էր մնացել:  
Մինչ սեիթիները անհետանում էին  
կոյտերով, մինչ Կիպրոսի գինին  
չոսում էր առատութեամբ, երա-  
րու աշք ունքով անելը իր գործը  
առարում էր և կրկնակի Յիմա-  
րացած զոհերը այնտեղ էին թող-  
նում թէ իրանց զբամբ և թէ ե-

բանց խելքը։  
Հենց այս վտանգաւոր վայրից էր, որ մենք տեսանք այս պատմութեան հերոսին դուրս դալին և նա այս զեշերը միայն մէկ հատ կորուստ չէ որ ունեցել էր Պրափանները Փիս-Տաս-ով դատարկելուց զատ, Դօլֆինօ պալատի հըրդեցի մէջ կորել էր և նրա միակ նկարը, որ նա նկարել ու վերջացրել էր, իր ամբողջ կիանքի մէջ, այն նկարը որին բոլոր հասկացները մի գերազանց գործ էին համարում, նկարի նիւթը պատճենինից էր առնեած և այնպէս կենանի էր արտայայտած ու այնպիսի հմուտ վրձինով նկարւած, որ նա կարող էր նոյն իսկ իրան, Տիցիէնին արժանի լինել Մի հարուստ սենատօրի ծախւած լինելով, այդ կտաւը նոյն վարձանն էր ունեցել լինչ ունենում են

թանկագին գործերի մեջ մասը, մի ծառայի անզգութութիւնից մոխիր էին գառել այդ կարգի հարստութիւնները, Բայց Պիպօն գրամասին շատ բիշ էր հոգս անում, նա միայն մտածում էր չար բախտի մասին, որ անսովոր կատարութեամբ հալածում էր իրան և այն չարերի մասին, որոնց շնորհով տարւել էր։

Աերագառնալով տուն, նա յետ բաշեց սեղանի սփռոցը ու սկսեց համբել պահանում մացած փողերը, Եւ որովհետեւ նա բընականից ուրախ ու անհօգ բնաւորութեան տէր մարդ էր, ուստի ծառայի օգնութեամբ շօրեր հանելուց յետո, խալաթը հազար սատեց լուսամուտի մօտ, Նկատելով որ լոյսը արգելն բոլորովին բացւել էր, մոածեց, թէ արդեօք հարկաւոր էր լուսամուտների փեղ-

կերը գոցել ու անկողին մտնել  
թէ ինքն էլ ուրիշների պէս վեր  
կենալ վաղուց է նրան չեր պա-  
տահէլ տեսնել արեգակը արևե-  
լեան կողմում և երկինքն էլ սովո-  
րականից պայծառ էր թւումնրան։  
Նախ քան արթուն մնալ թէ քնել  
որոշելը, բնի գէմ կուելով, նա իր՝  
սովորական շոկոլադը խմեց պատըշ-  
գամրում նստած։ Հենց աչքերը  
փակւում էին, նրան թւում էր, թէ  
տեսնում է սեղան, շարժւող ձեռ-  
քեր, գունատ գէմքեր և լսում չա-  
րերի ձայնը։ — Ենչ օրհասական  
բախտ, մրմնջում էր նա, միթէ հա-  
սատալի՛ քան է, որ տասն և հին-  
գով տարել ան նա տեսնում էր  
իր սովորական հակառակորդ ձե-  
րունի Վիստասիանօ Մեմմօնն, որը  
և տասն ու ութ էր բերում ու տի-  
րանում էր սեղանի վրա զարսած  
ոսկուն։ Այդ ժամանակ, վատ երա-

զեց սթափւելու համար, նա յան-  
կարծ բաց էր անում աչքերը ու  
գիտում ծովեզրով անցնող աղջիկ-  
ներին։ Նրան թւաց թէ չեռում մ  
մի գիմակաւոր կին է տեսնում։ Հ-  
նայած որ բարեկենդանի օրեր էին,  
այնուամենայնիւ նա զարմացաւ  
որովհետեւ աղքատները չեն գիմա-  
կաւորւում, իսկ Վենետիկիցի տիկ-  
նոջ այդ ժամին ոտքով տանից  
զուրս գնալը տարօրինակ էր։ \*  
Բայց նա շուտով նկատեց, որ գի-  
մակ կարծածը՝ մի իսափշիկ կնոջ  
գէմք էր, որին աւելի մօտիկից գի-  
տելով բաւական լաւ հագնեւած գը-  
տաւ։ Այդ կինը շատ արագ էր բայ-  
լում և յետեկից փչող քամու մի  
հարւածը նրա ծաղկաւոր շըջա-  
զգեստը ազդրերին հպելով։ Վայե-

\* Հին ժամանակներում բարեկենդան-  
ներին Վենետիկում գիմակով են զուրս  
դադիւն Շ, Հ,

ըսւչ կոնտուրներ նկատեց: Պիպօն  
չեռացաւ պատշգամբից և ոչ ա-  
ռանց զարմանքի տեսաւ, որ կինը իր  
դուռն է բաղկում:

Դոնապանը ուշանումէր բա-  
նալու:

— Ի՞նչ ես դանկանում, ձայն  
նուեց երիտասարդը: Արդեօք դոր-  
ծըդ ի՞նձ հետ է, թուխիկ: Իմ ա-  
ռանը Վեցելիո է ու եթէ ուշա-  
նում են գունը բանալ, ես ինքս  
կզնամ բանալու:

Խափշիկ կինը գլուխը բարձ-  
րացրեց:

— Տեր անունը Պօմպօնիօ Վե-  
ցելիո է.

— Այս, կամ Պիպօ ինչպէս  
կուզենաս:

— Գուք Տեցիէնի որդին էր.

— Պատրաստ եմ հրամանիգ,  
ինչով կարող եմ քեզ ծառայել  
Պիպօի վրա մի սուր ու չե-

տարրքիր Հպիեացը գցելուց հառ,  
խափշիկ կինը մի քանի քայլելու  
զնաց, ճարպիկութեամբ պատշ-  
գամբի վրա նետեց մի փոքրիկ  
արկղը թղթի մէջ փաթաթած, յե-  
տոն՝ արագութեամբ փախաւ. մերժ  
ընդ մերթ և ետ նայելով, Պիպօն  
վեր առաւ արկղիկը, բացեց և դը-  
րա մէջ մի սիրուն բամբակի մէջ  
կոյն ենթադրեց, որ բամբակի մէջ  
մի նամակ էլ լինելու է այդ դէպ-  
ր բացատրող: Ցիրաւի, տոմսակ  
ըւ բացատրող: Ցիրաւի, տոմսակ  
կար այնտեղի բայց նա էլ նոյն  
չափ խորհրդաւոր էր, ինչպէս և  
մացեալը, որովհետեւ տոմսակում  
չետեսեալ խօսքերն էին գրւած:

Պատաղանց թեթև կերպով  
մի ծախսեր իմ մէջ եղածը, երբ  
տանից դուրս գալու կլինիս, մէ-  
ջըս մէկ ոսկի միայն գցիր, այդքանը  
բաւական է մէկ օրւան չամար, և

Նթէ այդ մէկ սոկուց մի բան էլ առ  
ւելնա, որչափ էլ նա քիչ լինի,  
զարձեալ կարող ես մի աղքատ  
գոնել որը չնորհակալ կլինի  
քեզանից այդ մնացորդիդ համարու

Երբ երիտասարդը մի հա-  
րիւր տեսակ շուռ ու մուռ տւեց  
արկղիկը, տնդղեց քեսան, կրկին  
անգամ ծովեզերքին նայեց ու երր  
բոլըրովին համոզւեց, թէ այլնս  
ոչ մի բան չէ կարող հասկանալ.  
«Պէտք է խոստովանել մտածեց  
նա, որ այս նւէրը մի հաղւագիւտ  
բան է, միայն թէ շատ վատ ժա-  
մանակ է ինձ եկել» Ինձ տւած  
խորհուրդը լաւ խորհուրդ է, բայց  
չափազանց ուշ է, Ագրիատիկի յա-  
տակը արդէն խորասուզած մար-  
դերին ասել թէ դուք խեղդւում  
էք. Ո՞ր սատանան պիտի այս  
բանը ուղարկած լինի?

Պիտօին դժւար չէր հտուկա-

նալ, որ խափշիկ կինը սպասուինի  
էր, նա սկսեց մտածել թէ արդեօք  
ո՞վ կարող էր լինիլ այն կինը, կամ  
բարեկամը, որը այդպիսի մի նւէր  
ուղարկէր իրեն, և, որովհետեւ  
նա համեստութիւնից կուրացող  
մարդ չէր, վճռեց, որ դրա ուղար-  
կողը աւելի շուտ մի կին պիտի լինի,  
քիրան թէ ընկերներից մէկը. Քի-  
րան թաւիշից էր, ոսկով լանւած, և  
այնչափ նուրը ու ծաշակով էր կար-  
ւած, որ չէր կարելի ենթադրել  
թէ խանութից է զնւած. Այս  
պատճառով նա իր մարումը մի-  
պամի սկսեց թւել նախ Անե-  
տիկի ամենազեղեցիկ տիկիններին  
և ապա նորանցից պակաս գեղեց-  
կուհիներին. բայց չենց այդտեղ  
էլ նա կանգ առ ու ու ինըն  
իրեն հարց տւեց, թէ ինչուպէս՝ ԳՐԱԴԱՐԱՆ  
կարող է հասկանալ, ո՞ւ ԱՌԵԲՐԱՅԻ  
ուղարկողը Աղջանիթիթով. Ար 1922

Ա. ԱՅԱՍՆԻԿՅԱՆ ԽԱՎԱՐ  
ԱԿԱДЕՄԻԱ, ՄԱՏԻԿԱՆԱ  
ԳՐԱԴԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

մենայանդուղն ու ամենաբազզր երազների մէջ ընկաւ։ Մի բանի անդամներն թւաց, ինչ գուշակել էր, նրա սիրտը սկսեց բարախել երբ նա ձիգ էր թափում զրածքի ձեռքը ձանաչել։ Կար մի հողոնիացի եշիանուչի, որը այդպէս զեղագրական ձեւով էր կաղմում իր նամակները, նոյնպէս և մի զեղեցիկ զը հրեսչիա տիկին։ որի ձեռագրին էլ փորբ ինչ նմանում էր։

Ոչինչ այնքան անախորժ չէ, քան երբ այսպիսի բազզր երազների ժամանակ մարդ յանկարծ մի անդուրեկան բան է մտարերում. զա մօտաւորապէս նման է այն բանին, երբ ծաղիկներով ծածկւած դաշտում մանդալիս, ոտրդ օձի վրա ես կոթում։ Միենայնը Պիպօն զգաց, երբ յանկարծ մի ոմն Սօննա Բիանշինային մոտարերեց, որը մի քանի

ժամանակից ի վեր նրան սաստիկ ձանձրացնում էր։ Մէկ անգամ դիմակահանդէսում այդ կնոջ հետ Պիպօնն մի բրկած էր պատահել թէկ դա մի բաւական գեղեցիկ կին էր, բայց Պիպօն ոչ մի սէր չէր տածում դէպի նորան։ Սօննա Բիանշինան ընդհակառակը, յանկարծ խանդավառել էր Պիպօնվակ և մինչեւ իսկ ջանում էր սէր նկատել այնտեղ, որտեղ բաղարավարութիւն կար. այդ կինը նրանից ձեռք չէր վերցնում, յաճախ նամակներ էր ուղարկում և ձանձրացնում նրան իր սիրաբորբոր յանդիմանութիւններով։ Բայց Պիպօն մի օր տանից գուրս գալիս երգւեց այլեւ չվերադառնալ այնտեղ և շատ հաւատարիմ մնաց իր խօսքին։ Այս պատճառու էլ նա այժմ մտածեց, թէ իր համար քիսա կարող և ուղարկողը Սօննա Բիանշինան լինե-

լու է: Եյդ կասկածը իսորտակեց  
նրա ուրախութիւնը ու բաղը ցը-  
նորբները, որոնցով քիչ առաջ  
նա փայփայում էր. որչափ նա  
աւելի էր մտածում: այնքան աւե-  
լի հաւանական էր գտնում այդ  
ենթագրութիւնը: Ըսկնելով վաս-  
տրամագրութեան մեջ, փակեց  
պատռհանը և օրոշեց քնել:

Բայց նա չէր կարողանում  
քնել. հակառակ բոլոր հաւա-  
նականութեան, նա անկարող էր  
հրաժարել մի այլ ենթագրու-  
թիւնից, որը նրա ինքնասիրու-  
թիւնն էր շցում: նա հակառակ իւր  
կամքին, շարունակեց երազել: եր-  
բեմն նա ուզում էր մոռանալ քի-  
սան ու չմտածել նրա մասին,  
երբեմն էլ նոյն իսկ Մօննա Բիան-  
շինայի գոյութիւնն էր աշխատում  
մոռանալ, որպէսզի կարողանա ա-  
ւելի հեշտութեամբ դանել քի-

առն ուղարկողին: Այսուհենայնիւ  
նա վարագոյները իշերցել էր և  
շուր էր եկել միւս կողմը, որ  
լցու շտեսնի: Յանկարծնա վեր  
ցատկեց և կանչեց ծառաներին:  
Նրա մէջ այդ միջոցին մի շատ  
պարզ միտք էր յղացել որ առաջ  
գլխովն էլ չէր անցել: Մօննա  
Բիանշինոն հարուստ չէր, նա մի-  
այն մի աղախին ունէր և այդ ա-  
ղախինն էլ խափշիկ չէր: այլ մի  
Զիօգիտացի գէր աղջիկ: Աւրեմն  
ինչպէս կարող էր նա այս գէպքի  
համար այդ անձանօթ սպասուհուն  
ճարել որ Պիպօն Վենետիկում  
երբէր տեսած չէր: «Օրհնեալ  
լինի, բացագանչեց նա, բո սկ ե-  
րեսը և Ավիրիկէի Արեգակը, որը  
նորան ներկել է: » Յետոյ առանց  
երկար սպասելու, նա իր հագուստը  
ուզեց, և ասաց որ իր գոնդոլը ա-  
ռաջ բաշեն:

III

Նա վճռել էր պյութութեան  
գնալ սիմիօրա Դորոթէին, ավոգա-  
սուր Պատրակիզօին կնոջը: Այս  
պատկառելի տարիքի տէր ամիկինը  
Հանրապետութեան մէջ ամենաչա-  
րուստ ու ամենախելօք կինն էր.  
Բացի դրանից նա Պիպօի կնրա-  
մայրն էր, և որովհետեւ Վենետի-  
կում ոչ մի նշանաւոր անձնաւո-  
րութիւն չկար, որին նա չձանա-  
չէր, ուստի Պիպօն յօյս ունէր, թէ  
տիկինը կկարողանա օգնել լոյս  
սփոելու իրեն զբաղեցնող գաղա-  
նիքի վրա: Յամենայն գէպս նա  
մտածեց, որ զեռ շատ վաղ էր իրան  
ինամակալուհուն ներկայանալ  
ուստի, նորա մօտ զնալուց առաջ  
նա մի պտոյտ կատարեց Պօկիւ-  
րացէների տակ:

Պէպրը այնպէս ըերեց, որ նա

չէնց այնտեղ էլ Մօննա Բիանշի-  
նային պատահէց, կտորներ սակար-  
կելիս. Պիպօն խանութ մտաւ և,  
առանց ինքն նրան հաշիւ տալու,  
մի քանի աննշան խօսքերից յետոն  
ասաց նորան: —Մօննա՝ Բիանշինա,  
գուր այս պոտութ ինձ մի սիրուն  
նւէր էիր ուղարկել և մի իելացի  
խորհուրդ էիր տւել խորին շնոր-  
հակալերս եմ յայտնում ձեզ:

Ալապէս գրական կերպով խօ-  
սեով, զոյցէ նա մտածում էր, թէ  
աւելի շուտ կարող է իրեն տանջող  
կասկածը փարատել բայց Մօննա  
Բիանշինան այնքան էլ միամիտ  
չէր, որ իսկոյն իր զարմանքը ցցց  
տար, առանց մի լաւ քննելու,  
թէ արդեօք ձեռնտու է զարմա-  
նալը: Թէև իսկապէս նա ոչինչ  
էլ չէր ուղարկել երիտասարդին,  
ըստ նա իսկոյն նկատեց, որ ա-  
րայց նա իսկոյն պարտաւորած  
ոիթ կար Պիպօին պարտաւորած

վիճակի մէջ գնելու: Ճիշտ է, նա  
պատասխանեց, թէ չէ հասկանում.  
ինչի՞ մասին է Պիպօն խօսում,  
բայց այդ ասելիս նա այնպիսի մի  
նուրբ ժափտ ցցց տւեց ու այն-  
պէս համեստութեամբ կարմրեց,  
որ Պիպօն համոզւեց, թէ հակա-  
ռուկ նորա անմեղ ձեւանալուն,  
քիսան ուղարկողը նա է: — Խսկ քա-  
նի՛ ժամանակ է, հարցրեց նա,  
որ այդ սիրուն խափշեկ կինը ձեր  
հրամանի տակ է գտնուում:

Այս հարցումից շփոթւած և  
չիմանալով ինչ պատասխանել:  
Մօննա Բիանշինան մի բիշ տատան-  
եց, յետո բահրահ ծիծաղեց ու  
յանկարծ թողեց Պիպօն հեռացաւ.  
Պիպօն մնաց մինակ և իրեն յու-  
սախար զգալով, հրաժարւեց իր  
նախամտածած այցելութիւնը տ-  
նելուց, վերադառն տուն, քիսան  
մի տնկիւն նետեց և այլ ես չմը-

տածեց դրա մասին:

Սակայն մի քանի օր յետո  
այնպէս պատահեց, որ նա մի մեծ  
գումար տարւեց ապաղիկ. Երբ նա  
գնում էր պարտքը վճարելու,  
յարմար տեսաւ այդ բիսայի մէջ  
ածել փողերը, որը թէ մեծ էր ու  
թէ գոտիից կախւած շատ սազ էր  
գալի: Քիսան հետը տարաւ և հենց  
նոյն երեկոյին դարձեալ խաղաց  
էլի տարւեց:

— Աը շարունակէ՞ր, հարցրեց  
Սըր Աեսպասիանօն, գիւղանատան  
ծերունի նօտարիւը, երբ Պիպօն  
փողը վերջացաւ:

— Աչ պատասխանեց սա, ես  
չեմ ցանկանում այնու ապահիկ  
խաղալ:

— Բայց ես կարող եմ ձեզ  
փոխ տալ որշափ կամենար, գո-  
ւեց իշխանուհի Օրսինին:

— Կոչողէս ե ես, առաջ ո՞ր

Վեսպասիանօն:

Նոյնպէս և ես, կրկնեց  
քաղցր ու հնչիւն ձայնով իշխա-  
նուհու բազմաթիւ թռոնի կներից  
մէկը, ըսց բացէր ձեր բիսան,  
պարոն Վեցելիօ, դրա մէջ գեռ մի  
սերին էլի կա:

Պիպօն ժպտաց, և յիրաւի  
բիսայիթորբում մի մոռացւած սե-  
քին էլ զտաւ: Թող այդպէս լինի,  
ասաց նա, մի ձեռք էլ խաղանք,  
միայն թէ դրանից աւել խաղալու  
չեմ: Նա վերցրեց զարատուիը  
և տարաւ, նորից խաղաց, շարու-  
նակ կրկնակի զումար վայր դա-  
լով: Կարճ ասելով՝ մի ժամփյ յե-  
տո նա արգէն յետ էր տարել թէ  
նախորդ երեկոյեան և թէ այդ օր-  
ւան բոլոր տարւած փողերը:

Ար շարունակէր, հարցրեց  
այս անդամ Պի լոն Սըր Վեսպա-  
սիանովն: Եթի սրա առջեռում ոչինչ

էր մսացել:

— Ու մեծ տեսմարի մէկը լի-  
նելու եմ, որ թշյւ տամ ինձ քա-  
մելու մի այնպիսի մարդու, որը մի-  
այն մի սէրինի բիսկ ունի: Ընիծ-  
ւի այդ բիսան: Դրա մէջ անշուշտ  
մի կախարդական բան կայ:

Կատարիուսը կատաղած դուրս  
գնաց սրահից:

Պիպօն էլ պատրաստում էր  
նրա յետեւից դուրս գնալու, երբ  
սէրինի մասին յիշեցնուլ օրիորդը  
առաց նրան ծիծալելով.

— Բ սնի որ ձեր բախտը  
գուր ինձ էր պարտական, նւիրե-  
ցէր ինձ այն սէրինը, որի շնորհով  
դուր այդաւի փող ստացաք:<sup>14</sup>

Այդ սէրինի վրա մի փորբիկ  
նշան կար, որով նրան խակցն կա-  
րելի էր ճանաչել Պիպօն, վիտ-  
ույշ գտու սէրինը և հենց էն է  
ձեռքը պարզեց գեղեցիկ օրիորդին

որ ամեն անգամ, երբ բանեցնում  
էր այդ քիսան, միշտ տանում էր:  
Ամեն անգամ, քիսայի մեջ մեկ ուս-  
կէ դրամ դնելիս, նրան մի տե-  
սակ մնոտիապաշտութիւն էր պա-  
շարում և, հակառակ իր կամքի,  
նա երբեմն խորհում էր արկղիկի  
յատակում գտնւած խօսքերի ճըշ-  
մարտութեան մասին։ Մէկ սե-  
րինը մէկ սերին և, ասում էր  
նա ինըն իրեն, իսկ շատ մարդ  
կա, որ օրական մի սերին էլ չու-  
նի։ Արդ միտքը նրան աւելի ին-  
լացի էր գարձնում և նա փոքր  
ինչ սահմանափակում էր իւր  
ծախսերը։

Դժբախտաբար Մօննա Քիան-  
շինան չէր մոռացել Պիտօի հետ  
Պրօկիւրացիէնսերի տակ ունեցած  
խօսակցութիւնը, Պիտօին շարու-  
նակ սիալմունքի մեջ պահելու նը-  
պատակով, նա ժամանակ առ ժա-

առալու յանկարծ բացադանչեց։

— Ոչ իմ գեղեցկուհիս, արևո  
գիտենա, որ բեղ չեմ տա, բայց  
ցըց տալու համար, որ ես ժլատ  
չեմ, այտ նրա փոխարէն տասը,  
ինդրեմ լոնդունեցէք։ Ինչ այդ սե-  
րինին է վերաբերում, ես ուզում  
եմ, վերջերս ինձ տւած խորհուր-  
դին հետեւ և նորում եմ նա-  
խաթիւնամութեանը։

Այս ասելով, նա նետեց սե-  
րինը լուսամուտից։

— Միթէ կարելի բան է, մը-  
տածում էր նա տուն վերադառ-  
նալիս, որ Մօննա Քիանշինայի բի-  
սան, ինձ բախտաւորութիւն բե-  
րէ։ Պա բախտի մի տարօրինակ  
կատակ կլինի, եթէ մի առարկա,  
որը ինըն ըստինքեան ինձ անեա-  
խօրծ է, բաղդաւոր աղղեցութիւն  
ունենա վրա։

Ցիրափ, շուտով նա նկատեց

մանակ մի-մի փունջ կամ մի ուրիշ  
չնչին նւէր էր ուղարկում, մի  
քանի խօսք դրած տոմսակի չետ:  
Ես արգէն ասացի, որ Պիպօն սաս-  
տիկ ձանձրացել էր այդ կնոջ ան-  
երեսութիւնից և որոշել էր ոչինչ  
չպատասխանել նորան:

Վերջապէս այնտեղ հասաւ,  
որ Մօննա Բիանշինան, այդպիսի  
սառնութիւնից վերջին յուսահա-  
տութեան հասնելով՝ որոշեց մի  
յանդուդն ըայլ անել որը սաստիկ  
դուր չեկաւ երիտասարդին, նա  
Պիպօն բացակայութեան ժամա-  
նակ եկաւ նրա ընակարանը  
փոքր ինչ փողաւեց ծառային  
ու յաջողեց տան մէջ պահել:  
Տուն վերադառնալով, Պիպօն նո-  
րան այնտեղ դուռ և ստիպւած  
եղաւ, առանց բաշւելու, ասել նո-  
րան թէ ինքը բոլորվին սէր

երեն հանգիստ թողնել:  
Բիանշինան, որը, ինչպէս ա-  
սեցի, գեղեցիկ էր, սոսկալի կեր-  
պով բարկացաւ նա Պիպօնին հա-  
զար ու մի յանդիմանութիւններ  
արեց, բայց այս անգամ հէ քնքոյշ:  
Նա ասաց, թէ Պիպօն իրեն խա-  
րել է սիրո մէջ, թէ ինքը անարդ-  
ւած է համարում իրեն Պիպօնի ըր-  
տրչով, և թէ վերջապէս նա այդ  
բոլորի վրէժը կլուծի Պիպօնից:  
Պիպօն այդ սպանալիքը լսելով  
ինըն էլ զայրացաւ, ապացուցանե-  
լու համար, թէ ինք ոչնչից չէ  
վախենում նա ստիպեց Բիանշի-  
նային անմիջապէս յետ վերցնել  
այդ օրւա առաւտեան ուղարկած  
փունջը և որովհետեւ բիսան էլ  
ձեռքի տակ էր գտնւում. — Առէք,  
ասաց նա, այս էլ վերցրէք: Թէ՛ք  
այս բիսան ինձ բախաւորութիւն  
էր բերում, բայց զբանով ուղում

եմ ձեզ հասկացնել որ ես չեմ  
ցանկանում ձեղանից և ոչ մի բան  
ունենալ:

Բարկութեան ազգեցութեան  
տակ քիսան ձեռքից բաց թողեց  
թէ չէ, սկսեց արդէն այդ ափսո-  
սար Մաննա Բիանշինան իսկի  
չմտածեց էլ երիտասարդին պար-  
զել արած խարէութիւնը՝ նա լրց-  
ցւած էր կատաղօւթեամբ, բայց  
նշյնպէս և Կեղծիքով Քիսան վեր-  
գրեց ու հեռացաւ, վճռելով Պի-  
պօին զղալ տալ իր հետ այդպէս  
վարւելու համար:

Պիպօն իր սովորութեան հա-  
մաձայն այդ երեկոյին խաղաց ու  
տարւեց Յաջորդ օրերում նա ա-  
ւելի բախտաւոր չեղաւ Սըր Վես-  
պասիանօի զարերը միշտ աւելի  
լաւ էին գույք և նո նշանաւոր  
գումարներ էին տանում: Պիպօն  
զայրացաւ իր բախտի և լր սնո-

տիապաշտութեան դէմ, յամառու-  
թիւն արեց և գարձեալ տարւեց:  
Աերջապէս մի անգամ, իշխանուչի  
Օրսինիի տանից դուրս գալիս, նա  
չկարողացաւ իրան զսպելու չըրա-  
ցագանչել սանդուխների վրա.  
— Ների՞ր, Աստած, Ես կարծում եմ,  
որ այդ պառաւ խենթը իրաւացի  
էր, ասելով որ իր քիսան կախար-  
դւած է, որովհետեւ այն օրւանից  
ինչ ես այդ քիսան Բիանշինային  
վերադարձի, այլևս ինձ ոչ մի  
չնորհըով զար չէ գալի:

Արդ վայրկեաննին նա իր առ-  
ջեկց մի Փոքրան ծաղկաւոր շըր-  
ջաղցեստ նկատեց, որի տակից  
մի զոյդ բարակ ու ճարպիկ ոտ-  
ներ էին երեւում: Դա խորհրդա-  
ւոր խափշիկ աղջիկն էր: Պիպօն  
իր քայլերը կրկնապատկեց, հասաւ  
խափշիկին և հարցրեց նորան, թէ  
արդեօք ո՞վ է նա և ումն է

պատկանում:

— Ո՞վ է իմանում, պատաս-  
խանեց Ափրիկեցին նենդաւոր ժպի-  
տով:

— Դու ինք, կարծում եմ:  
Դու Մօննա Բիանջինայի աղախինը  
չե՞ս:

— Ո՞չ. ո՞վ է այդ Մօննա Բի-  
անջինան:

— Է՛՛, Տէր Աստւած, նա,  
որ անցեալ անդամ քեզ մի արկդ  
էր տւել ինձ բերելու, ինչ գու  
այնքան ճարպիկ կերպով իմ պա-  
տշգամբը նետեցիր:

— Ա՛՛, Զերդ գերազանցու-  
թիւն, չկարծեմ:

— Ես այդ զիտեմ, մի' աշխա-  
տիր կեղծել նա ինքը ինձ առաց  
այդ մասին:

— Եթէ նա ձեզ ասել է... տա-  
տանւելով պատասխանեց խափշիկը  
ապա ուսերը վեր քաշելով մի վայր-

կեան մտածելուց յետո, իր հովհա-  
րով կամացուկ Պիպօի թշին խիեց  
ու փախաւ, բարձրանցյն ասելով.

— Իմ սիրուն երիտասարդ,  
քեզ վրա ծիծաղել են:

Վենետիկի փողոցները մի այնպի-  
սի բարդ լարիրինթ են ներկայացը-  
նում, այնպէս անսպասելի ու խառնի-  
ճաղանձ կերպով իրարու հետ խճը-  
ւում են, որ Պիպօն ջահիլ ալջկա-  
նը ձեռքից թողնելուց յետո այլ  
ևս չկարողացաւ նորա յետեւից  
համնել: Նա մնաց բոլորովին շւա-  
րած, զդալով որ երկու սխալ էր  
դորձել նախ որ միամտօրէն քիսան  
տւել էր Բիանջինային և երկրորդ  
այն, որ չէր կարողացել խափ-  
շիկին բռնել: Քաղաքումը աննը-  
պատակ թափառելով, նա համա-  
րեա թէ անդիտակցարար իր քայ-  
լերը ուղղեց գէպի իր կնքամայր  
տիկին Գորոթէի ապարանքը: Նա

այժմ զզում էր, որ մի քանի օր  
առաջ այս տիկնոջը այցելելու նը-  
պատակից հրաժարւել էր: Նա սո-  
վորութիւն ունէր այդ տիկնոջից  
միշտ խորհուրդ հարցնել իրեն չե-  
տաքրքրող խնդիրների վերաբեր-  
եալ և շատ հավել էր պատահում,  
որ այդ գիմումները ապարգիւն լի-  
նէին: Պիպօն տիկնոջ գուաւ իր  
պարտիզում միայնակ և ձեռքը  
համբուրելուց յետոյ. — Տեսէ՞ք, ա-  
սաց նա, իմ սիրելի կնքամայր,  
թէ ինչ յիմարութիւն արեցի այս  
քանի օրս: Վերջերս ինձ մի քիսա  
էին ուղարկել...

Բայց հազիւ էր նա այս խօս-  
քերը արտասանել որ տիկին Պո-  
րովթէն սկսեց ծիծաղել. — Է՛ս, լաւ,  
ասաց տիկինը, միթէ՛ այդ քիսան  
գեղեցիկ չէ. միթէ դու չե՛ս գըտ-  
նում, որ ոսկէ ծաղիկները շատ  
սազում են կարմիր մախմուրի վրա:

— Ի՞նչպէս, բացադանչեց  
երիտասարդը, միթէ կարելի՞ բան  
է, որ գուք արդէն տեղեակ լի-  
նիք....

Այդ վայրկեանին պարտէղ  
մտան մի քանի սենատորներ. պատ-  
կառելի տիկինը տեղից վեր կացաւ  
նրանց գիմաւորելու և ոչինչ չպա-  
տասխանեց Պիպօն հարցումներին,  
որ չէր գաղարում զսրմանքը նո-  
րան ուղղել

---

---

III

Սենատորների հեռանաւ-  
լուց յետո էլ տիկին Պորովէն  
չուղեց պատասխանել չնայած իր  
սանիկի աղաջանք ու պաղատանք-  
ներին: Առանց այն էլ նա արդէն  
զզում էր, որ վայրկենական ու-  
րախ տրամադրութեան շնորհով  
երիտասարդին լայտնել էր, թէ  
ինը տեղեալ է այն սիրային  
գաղտնիքին, որի մէջ նառնելու  
դիտաւորութիւն չունէր բնաւ: Եւ  
որովհետեւ Պիպօն շատ էր աղա-  
չում, տիկինը ասաց նրան:

— Եիրելի զաւակս, միակ  
բանը ո՞ւ կարող եմ քեզ ա-  
սել այն է, որ Ճիշտ է, քեզ հա-  
մար քիսա ասեղնազործողի անունը  
Ճայտնելով, զուցէ և մեծ ծառա-

յութիւն մատուցած կլինեմ քեզ  
որովհետեւ այդ անձնաւորութիւնը  
երաւ որ Վենետիկի ամենապղնիւ  
և ամենաղեղեցիկ կիներից մէկն  
է: Բաւականացիրուրեմ այսչափով:  
Չնայած որ շատ կցանկանայի քեզ  
պարտաւորացնել, բայց պէտք է որ  
լուեմ երրէ՛ք չեմ մատնիայն գալու-  
նիքը, որը միմիայն ես զիտեմ,  
իսկ երբ թցլուութիւն ստանամ  
այդ մասին, այն ժամանակ ես ինձ  
համար մեծ պատիւկհամարեմ այդ:

— Պատիւ պիտի համարէք,  
սիրելի կնքամայր, Բայց մի՛թէ կա-  
րող էք կասկածել, որ միմիայն ինձ  
համատալով այդ գաղտնիքը...

— Հասկանում եմ, զրա քե-  
րեց ծեր տիկինը, և որովհետեւ, չը  
նայելով իր պատկառելի տարիքին,  
նա անկարող էր փոքր ինչ չարա-  
ճճիութիւն չանել ուստի աւելա-  
ցրեց, քանի որ մի մի անդամ ոտա-

նաւորներ գրել գիտես, ինչո՞ւ մի սօ-  
նետ չես շարադրում այդ առիթով:

Տեսնելով որ այլևս ոչ մի  
բառ չէ կարող գուրս քաշել Պի-  
պօն վերջ դրեց իր աղաւանքներին.  
սակայն նրա հետաքրքրութիւնը  
ինչպէս դժւար չէ գուշակել վեր-  
ջին ծայր լարւած էր նա մնաց  
ավօգատոր Պասբալինօի տանը  
ճաշելու, անկարող լինելով հեռա-  
նալ իր կնքամայրեց և յուսալով,  
թէ գուցէ անձանօթ գեղեցկուհին  
էլ այցելութեան գար երեկոյեան.  
Բայց նա բացի սենատորներից,  
բարձր դատաւորներից ու հանրա-  
պետութեան ամենաականաւոր ըլ-  
քեստներից ոչ որի չը տեսաւ.

Արքամուտին երիտասար-  
դը բաժանւեց այդ հասարակու-  
թիւնից և գնաց ու մի փոքրիկ  
պարտիզում նստեց: Նա մտածեց  
իր անելիքի մասին և երկու բան

որոշեց. նախ Բիանջինայից յետ  
պաշանջել բիսան և ապա՝ հետե-  
ւելով տիկին Դորոթէի կատա կով  
առաջարկած խորհրդին, այդ գեղ-  
քի առիթով մի սօնետ շարադրել:  
Բացի այդ, նա որոշեց՝ երբ-  
պատրաստ կը լինի սօնետը. յանձ-  
նել իր կնքամօրը, որը անկասկած  
կը շտապի ցոյց տալ անծանօթ  
գեղեցկուհուն: Զուղենալով այլևս  
ինդիրը յետածգել նա վերկացաւ,  
որ հենց իսկոյն գնա իր երկու ո-  
րոշումն էլ կատարի:

Ամէնից առաջ բաճկոնը ուղ-  
ղեց և զինարկը ականջի վրա թեք  
գնելուց յետո, հայելու մէջ  
նայեց, որ տեսնի, թէ արդեօք լաւ  
տեսր ունի ինքը, որովհետեւ նրա  
առաջին միտքը այն էր, որ դար-  
ձեալ կեղծ սիրաշար ձեանա  
Բիանջինայի առաջ ու բաղդրու-  
թեամբ համոլի նրան: Բայց շու-

— 42 —

տով այդ մտքեց էլ հրաժարւեց,  
մտածելով, որ այդ կերպ կարող  
է նորից զարթեցնել այդ կնոջ  
կրքերը ու իրեն նոր ձանձրով  
ների ենթարկել: Դրան բոլորովին  
շակառակ ուղղութիւն ընտրեց.  
շտապով Բիանչինայի տունը վա-  
ղեց, իրեւ թէ սաստիկ բարկացած  
էր. և պատրաստւեց մի սոսկալի  
կու սարբելայնտեղ ու այնպէս վա-  
խեցնել նրան, որ այդ կինը մի անգա-  
մից ընդմիշտ հանդիսաւ թողնի իրեն:

Մոնեա Բիանչինան Աւենետիկի  
այնսեաչեա ու շիկահեր կանացից  
էր, որոնց վրէժինդրու թիւնը սաս-  
տիկ վտանգաւոր է նկատւել ամէն  
ժամանակ: Եյն օրւանից, ինչՊիպօն  
նրա չետ վատ էր վարւել, նա այլ-  
ևս Պիպօն ոչինչ չէր ուղարկել.  
անշուշտ այդ կինըիր ասածի հա-  
մաձայն լուսումունչպատրաստում  
էր մի կերպ վրէժը լուծել: Անհրա-

ժեշտ էր ուրեմն մի վճռողական  
հարւած էլ տալ նրան, թէկուզ  
դրանով վտանգը աւելի մեծանարա:  
Բիանչինան տանից զուրս գալու  
վրա էր, երբ երիտասարդը նրա  
մօտ եկաւ. սա սանդուխների վրա  
բռնեց նորան ու ստիպեց ներս  
գնալ:

— Թշւառական կին, զոչեց  
երիտասարդը, այդ ե՞նչ արեցիր:  
Դուք իմ ըոլոր յցուերը խորտա-  
կեցիր և ձեր վրէժը լուծած է  
արդէն:

— Տէ՛ր Ասուած, ձեւ ի՞նչ է  
պատահել հարցրեց Բիանչինան  
վախեցած:

— Դուք գեռ հարցնո՞ւմ էլ  
էք: Ո՞ւր է այն քիսան, որ ասացիր,  
թէ իրը գուր էիր ուղարկել ինձ:  
Կամարձակւէք մի՞թէ գարձեալ  
այդ սուտը կրկնել:

— Ի՞նչ հարկաւորութիւն կա

իմանալու՝ սուտ եմ խօսել թէ ոչ:  
2զիտեմ, ինչ է եղել այն քիսան:  
— Կամ պիտի մեռնես և  
կամ քիսան պիտի վերադարձնես,  
գոչեց Պիպօն, նրա վրա յարձակ-  
ւելով և, առանց խեղճ կողջ կարած  
շրջազգեստին խնայելու, նա կոպ-  
տութեամբ պոկեց նրա կուրծքի  
քօղը ու սուրը դէմ արեց սրտին:

Բիանջինան իրեն մեռած  
համարեց և սկսեց օգնութեան կան-  
չել. բայց Պիպօն թաշկինակով նրա  
ըերանը բռնեց և, առանց թոյլ  
տալու մի ծպտուն հանելու, ստե-  
պեց ամէնից առաջ քիսան վերա-  
դարձնել որը բարերադդարար  
կորած չէր:

— Դու մի նշանաւոր ընտա-  
նիք ես անբաղդացրել ասաց նրան  
յետո երիտասարդը, Վենետիկի  
ամենաչոչակաւոր տներից մէկի  
անդորրութիւնն ես վրդովել դու

ընդմիշտ: Դողա՛, այդ ահարկու  
տունը հսկում է քեզ վրա. Հիմա  
ոչ դու և ոչ էլ քո ամուսինը չէք  
կարող մէկ քայլ անել որ ձեզ  
վրա հսկող աչքեր չլինեն: Գիշեր-  
ւա տէրերը անունդ արդէն գրելեն  
իրենց ցուցակի մէջ. միտքդ ըեր  
իշխանական Պալատի ցածրի գետ-  
նատները: Հէնց որ մի խօսք ար-  
տասանես այն սոսկալի դադանիքը  
երեան հանելու գիտումով, որ դու-  
չարամտութեամբդ գուշակեցիր,  
ամբողջ ընտանիքով կանչետանաբ:

Այս խօսքերի վրա նա  
դուրս գնաց. խօսքեր որոնցից ա-  
ւելի ահարկուն, ինչպէս ամէնքին  
յայտնի է, անկարելի էր Վենետի-  
կում արտասանել Corte maggioreի  
անխիդ ու դադանի ձերբակա-  
լութիւնները մի այնպիսի սարսափ  
էին տարածել, որ ով մի միայն  
կասկածւած էր զգում, նախօրօք

մեռած էր համարում իրեն։ Ճիշտ  
այդպէս էլ Բիանջինայի ամուսին,  
Պարոն Օրիօի Հետ պատահեց, ո-  
րին կինը մօտաւորապէս պատմել  
էր Պիպօի յայտնած սպառնացող  
վտանգի մասին։ Ճիշտ է, Բիանջի-  
նան բոլորովին չէր հասկանում,  
թէ ինչու համար կարող էր ի-  
րենց սպափիսի վտանգ սպառնալ և  
Պիպօն ինքն էլ ոչինչ չէր իմա-  
նում, որովհետեւ նրա բոլոր ասած-  
ները մի հնարովի պատմութիւն  
էին, բայց պարոն Օրիօն խոչեմա-  
քար մտածեց, որ իսկի անհրաժեշ-  
տութիւն էլ չըկար իմանալու, թէ  
ի՞նչ պատճառով են բարձրագոյն  
Ատեանի բարկութիւնը իրենց վը-  
րա հրաւիրել այլ ամենից կա-  
րեռն էր խոյս տալ վտանգից։ Նա  
Վենետիկում չէր ծնւած, նրա ծը-  
նողները ուրիշ երկերէին բնակւում,  
ուստի չէնց միւս օրը իր կնոջ

չետ նրանք նաև նստեցին և այլ  
և նրանց մասին ոչինչ չը լսւեց։  
Աչա այս եղանակով էր, որ Պիպօն  
միջոց գտաւ Բիանջինայից ազատ-  
ւել ու իր վրէժը լուծել խարե-  
բայական խաղի համար։ Բիանջի-  
նան իր ամբողջ կեանքի ընթաց-  
քում այնպէս էր հաւատացած, թէ,  
անշուշտ, միինչ որ կառավարչական  
գաղտնիք կար այն քիսաի հետ  
կապւած, որ ինքը ուղեցել էր յա-  
փշտակել բայց, որովհետեւ այս  
բոլոր տարօրինակ դարձւածների  
մէջ ամէն ինչ գաղտնի քօղով էր  
ծածկւած նրա համար, ենթադը-  
րութիւններից զատ նա ուրիշ ո-  
չինչ չկարողացաւ իմանալ Այդ  
միջադէպը Պարոն Օրիօի ազգա-  
կանները իրենց համար մասնաւոր  
խօսակցութիւնների առարկա դար-  
ձրին։ Խելքներին զօռ տալով, նը-  
րանք վերջի վերջո հաւանակա-

նականութեան մօտ մի հէրիաթ  
ստեղծեցին. Մի բարձր շրջանի կին,  
ասում էին նրանք, սիրահարւած  
է եղել Տիցիանելոի, այսինքն  
Տիցիէնի որդու վրա, իսկ սա  
Մոննա Բիանջինայի վրա է սիրա-  
հարւած եղել և, իշարկէ, իր միի-  
թարութիւնը այս վերջինի մօտ  
է գտնելիս եղել Յետո պատմում  
էին, թէ այդ բարձր շրջանի կինը,  
որը Տիցիանելոի համար իր ձեռ-  
քով մի բիսա է ասեղնագործել,  
հէնց ինքը գօժի կինն է եղել Աւ-  
րեմն, դժւար չէ երեակայել այդ  
կնոջ բարկութիւնը, երբ նա իմա-  
ցել է, թէ Տիցիանելոն նրա տւած  
սիրո պարզել նւիրել է Բիանջի-  
նային: Այսպէս էր այն ընտանե-  
կան բրօնիկոնը, որ ցածր ձայնով  
Պագուայում կրկնում էին իրարու,  
պարոն Օրիօի փոքրիկ տան մէջ:  
Իր առաջին ձեռնարկու-

թեանյացողութիւնից գոհացած՝ մեր  
հերոսը մտածեց երկրորդ ձեռնար-  
կութիւնը փորձել: Այժմ հարկա-  
ւոր էր իր անձանօթ գեղեցկու-  
հու համար մի սօնետ շարագրել:  
Բայց որովհէետև Բիանջինայի գլխին  
խաղացած տարօրինակ կատակը՝  
հակառակ իր կամքին, սաստիկ յու-  
ղել էր նրան, ուստի նա սկսեց ա-  
րագ-արագ մի բանի տոռն, խան-  
դավառութիւն շնչող, ոտանաւորներ  
գրել, Յոյս, սէր, խորհրդաւոր գաղտ-  
նիք և ամեն տեսակ, բանաստեղծ-  
նիքի յատուկ, կրքով արտայայ-  
տութիւններ կուտակւում էին նրա  
գլխում: «Բայց ախր կնքամայրս ինձ  
ասաց, որ իմ գործը Վենետիկի  
ամենավաղնիւ և ամենազեղեցիկ  
կանանցից մեկի հետ է,» մտածեց  
նա, «ուրեմն, ինձ հարկաւոր է  
պատշաճաւոր ձեւ պահպանել և ա-  
ւելի մեծ յարգանքով մօտենալ

նրանք:

Նա չնչեց եր առջեկ գը-  
րածները և, մի ծայրայեղութեւ-  
նից միւս ծայրայեղութեան անցնե-  
լով սկսեց փբո ն խօսքերից վան-  
կեր կաղմել ու ամէն կերպ ձիդ  
թափել այդ խօսքերին այնպիսի  
իմաստ տալու, որ յարմար լինէր  
իր անծանօթ սիրուհուն, այսինքն՝  
այնչափ գեղեցիկ ու այնքան ազ-  
նւատոհմ, որչափ որ կարող էր ե-  
րեակայել: Զափալանց համարձակ  
յայսին տեղի տեղ վախկոս կաս-  
կածը. խորհրդաւոր գաղտնիքի ու  
սիրո փոխարէն սկսեց այժմ գրել  
յարգանքի ու երախտաղիտութեան  
մասին: Անկարող լինելով ոչ  
մի անգամ չտեսած կնոջ գեղեց-  
կութիւնը գովարանել նա, կարե-  
լիին չափ զգուշութեամբ, մի քա-  
նի այնպիսի խօսքեր գործ ածեց,  
որ կարող էին ամէն մի դէմ-

քի յարմարւել: Կարճ ասելով, եր-  
կու ժամ մտածելուց ու աշխատե-  
լուց յետո, տասերկու տող, միջակո-  
տանաւորդրեց, որոնք թէն շատներ-  
գաշնակբայց և շատաննշան բանէին:

Այդ ոտանաւորը նա մի  
թերթ մագաղաթէ թղթի վրա  
արտադրեց, չորս կողմր թռչուն-  
ներ ու ծաղիկներ նկարեց ու մեծ  
ինամքով ներկեց նրանց: Բայց  
գործը վերջացրեց թէ չէ, գեռ  
ոտանաւորը մի անգամ չըկարգա-  
ցած, պատուհանից գուրս նետեց  
տան մօտով անցնող ջրանց-  
քի մէջ: «Այս ի՞նչ եմ անում, հար-  
ցրեց նա ինքն իրեն: Ինչո՞ւ է  
պէտք այս սիրային արկածի յե-  
տեկց ընկնելը, քանի որ սիրոս  
ոչինչ չէ թելագրում ինձ»:

Նա վերցրեց մանդոլինը  
ու սկսեց սենեակի մէջ մանգալ  
երգելով ու ածելով Պետրարքի

սօնետներից մէկի համար շմնւած,  
մի հին եղանակ: Մի բառորդ ժա.  
մից յետո նա կանգ առաւ. նրա  
սիրտը բարախում էր. նա այլքս  
ոչ պատշաճաւորութեան վրա էր  
մտածում և ոչ էլ այն մասին, թէ  
ինչ տպաւորութիւն կարող է ին-  
քը թողնել: Բիսնչինայից նլած  
քիսան, որ տուն էր լերէլ իր-  
քե մի յաղթանակ, սեղանէ վրա  
էր: Նա սկսեց զիտել այդ քիսան:

Այն կինը, որ այս բանը  
շինել է ինձ համար, ասաց նա  
ինքն իրեն, անշուշտ սիրում է  
ինձ և զիտէ սիրել: Եյսպիսի մի  
աշխատութիւն թէ ժամանակի  
կարօտ է և թէ դժւար գործ է,  
զարակ թելերը, այս կենդանի  
այս բարակ թելերը, այս կենդանի  
գոյները ժամանակ են պաշանջում,  
և այս աշխատութիւնը սնելիս,  
նա ինձ վրա է մտածել: Եյս քի-  
սակի չետ ուղարկած այն մի քանի

խօսքերի մէջ բարեկամական խոր-  
շուրգ կար միայն և ուրիշ ոչ մի  
երկմտանի բառ չկար: Սա, սրտի  
առարկայի կողմից ուղարկած, սի-  
րահարական մի հրաւէր է: Միթէ  
նա չէ մտածել իմ մասին, թէ  
մէկ օր պէտք է որ բաշարար բարձ-  
րացնեմ ձեռնոցը»

Նա գարձեալ գործի նստեց  
և, կրկին անգամ գրիչը ձեռքը ա-  
ռաւ, այս անգամ վախից ու յոյսից  
նա շատ աւելի էր վրդովւած, քան  
թէ զարախաղի ժամանակ մէկ ան-  
դամից ամենամեծ գումար վեր գա-  
լիս: Առանց մտածելու և առանց  
կանգ առնելու շոտապով նա մի սօ-  
նետ գրեց, որի թարգմանութիւնը  
մօտաւորապէս այս է.

Մանուկ էի, երբ կարդացի Պետքարքին,  
Ու կամեցա համել նորա հըռչակին  
Նա սիրում էր չնաշխարհիկ վեհ սիրով  
Եւ գնդգնդում աստվածային թառառով:

Նա օժտւած էր մի երկնատուր շնորհով,  
Կարդասրտինուրք գաղտնիքնեզ ուղղողեր,  
Վհրաստեղծելմի վայրկեանում վրձինով  
Ժպատող դէմքի մանրիկ թելեր ու վայրեր:

Օ՛, դուք, որ ինձ երէկ անշափ պատւեցիք  
Եւ ուղղեցիք մտերմական մի տոմսակ,  
Ըսդունեցէք տըխուր հոգուս երախտիք,  
Տիսուրք.... չէ, ինձ վաղ իսկ պիտի  
մոռանաք:

Թէ եւ չունեմ Պետքարքի պէս մնձ հանճար,  
Բայց սիրո ունեմ նրա սրտին հաւասար.  
Ես այն կտամ ինձ սիրողին մըշտապէս,  
Նրան կանեմ կեանքըս թուր ողջակէզ:

Պիպօն միւս օրը տիկին  
Դորոթէի մօտ գնաց: Հէնց որ նը-  
րանը միայնակ մնացին, նա սօնէ-  
տը հոչակաւոր տիկնոց ծնկների  
վրա գրեց, ասելով. « Աչա, սա  
ձեր բարեկամուչու համար է: »  
Տիկինը նախ զարմացած դէմք ըն-  
դունեց, յետո կարդաց ոտանաւո-  
րը և երգւեց, թէ ինքը երբէք  
չի յանձն առնի որ և է մէկին  
ցոյց տալ այդ: Բայց Պիպօն այդ  
Խօսքերի վրա ծիծաղեց միայն, ո-  
րովշետե ինքը ըոլորովին հակա-  
ռակն էր համոդւած: Այնուամենայ-  
նիւ նորա մօտից հեռանալիս Պի-  
պօն ուզում էր հաւատացնել թէ  
ինքը տիկնոց խօսքերի վրա իսկի  
չէ էլ կասկածում:



Այնուամենայնիւ հետեւեալ

շաբաթը Պիպօն վերին աստիճանի  
անհանդիստ անցկացրեց. սակայն  
այդ անհանդստութիւնն էլ իր հը-  
րապշը ունէր: Նա տանից դուրս  
չէր գնում և չէր էլ համարձակ-  
ւում, պյառէս ասած, տեղից շար-  
ժւել որ չլինի թէ բազդը ձեռ.  
քից բաց թողնի: Այս պարագա-  
յում նա աւելի խելացի էր վար-  
ւում, քան սովորապէս նրա հասա-  
կակիցներն են անում: Նա դեռ  
քսան ու հինգ տարեկան էր միայն,  
իսկ երիտասարդական անհամբե-  
րութեան չնորչով մենք շատ ան-  
գամ, չափաղանց շտապելու պատ-  
ճառով, մեր նպատակից շեղւում  
ենք: Բախտը պահանջում է, որ  
մարդ գիտենա պարագայից օգտւել  
ու ճիշտ ժամանակին բռնել նրան.  
որովհետեւ, նապօլէօնի ասածի նը-  
ման, բախտը կին է և չէնց այս  
հիման վրա էլ նա սիրում է այն-

պէս ձեանալ, թէ ինքը յօժա-  
րում է տալ միայն այն, ինչ իրե-  
նից ուժով են խլում: Այդ պատ-  
ճառով էլ հարկաւոր է նրան ժա-  
մանակ տալ մինչեւ որ ինքը ձեռ-  
քը բաց անի:

Խններորդ օրը երեկոյեան  
դէմ էր, երբ կամակոր չաստւա-  
ծուչին երիտասարդի դուռը բաղ-  
խեց և, ինչպէս կտեսնէր հիմա,  
դա իշուր բանի համար չէր: Երի-  
տասարդը ինքը իշաւ դուռը բա-  
նալու: Խափչիկ կինը շէմքի վրա  
էր. նրա ձեռքին մի վարդ կար  
բռնած, որը մօտեցրեց Պիպօն  
շրթներին:

— Հ.սմբուրեցէք այս ծաղիկը,  
ասաց նա Պիպօն, սրա վրա էն  
տիկնոց համբոյրը կա: Կարո՞ղ է  
արդեօք տիկինս ձեղ մօտ դալ ա-  
ռանց վտանգի:

— Գա մեծ անխոհեմութիւն

կըլինի, եթէ նա օր ցերեկով դա,  
պատասխանեց երիտասարդը, ան-  
կարելի է, որ իմ ծառաները նրան  
չը նկատեն: 2է՞ կարող արդեօք  
գիշերը դալ:

—Ա՛չայդ ո՞վ կհամարձակւի,  
եթէ նորա տեղ լինի նա չէ կա-  
րող ոչ գիշերով գուրս զնալ և ոչ  
էլ կարող է ձեզ իր մօտ լնդու-  
նել:

—Ուրեմն նա պէտք է հա-  
մաձայնի մի այլ տեղ դալ ուր որ  
բել ցոյց կը տամ:

—Ոչ նա ուզում է այստեղ  
դալ. այլես նախալզուշութիւններ  
ձեռք առէք:

Պիպօն մի քանի վայրկեան  
մտածողութեան մէջ ընկաւ:

—Քո տիկինը կարո՞ղ է ա-  
ռաւտեան վաղ վեր կենալ, հար-  
ցրեց խափշիկին:

—Թէկուզ այն ժամին, երբ

արեն է ծագում:

—Ուրեմն, լսիր: Ես լնդշան-  
րապէս շատ ուշ եմ վեր կենում,  
չետեապէս իմ ամրող տունը ա-  
ռաւտօնները բնած է լինում: Եթէ  
քո տիկինը կարող է լուսածէգին  
դալ այն ժամանակ ես նորան  
կսպասեմ և նա այստեղ ներս կը  
մտնի առանց ոչ որից նկատւելու:  
Ինչ վերաբերում է նորա այստե-  
ղից գուրս զնալուն, այդ իմ զործն  
է, եթէ միայն ինքը համաձայ-  
նի ինձ մօտ մեալ մինչեւ բրեկցիան  
մութն ընկնելու:

—Նա ինքը կըմնայ: Կցանկա-  
նայիք, որ այդ հէնց վալզ լինէք:

—Վաղը արշալոյսին,—ասաց  
Պիպօն: Նա մի բեռը ոսկի սողա-  
ցրեց աւետարերի օձիքի տակը ու,  
առանց այլես մի բան հարցնե-  
լու, վերադարձաւ իր սենեակը և  
փակւեց այնտեղ վճռելով անքուն

Հսկել մինչև լցա: Ամենից առաջ  
նա իր հանդերձները հանել տւեց,  
որ կարծեն, թէ պիտի պառկի քը-  
նելու. իսկ երբ մնաց մնող, մի  
լաւ կրակ վառեց, հաղաւ ոսկէ  
թելով գործած շափիկը, անուշա-  
հոտ վղնոցը, սպիտակ մախմուրից  
կարած չինական մետաքսէ թե-  
նոցներով բաճկոնը և ապա, ամե-  
նագեղեցիկ տրամադրութեան մէջ  
նստեց պատուհանի մօտ ու ըս-  
կսեց իր արկածի մասին անուշ  
կերպով երազել:

Նա շատ էլ անպատշաճ  
չէր համարում իր տիկնոջ այդպի-  
սի շուտափոյթ ժամադրութիւն  
նշանակելը, ինչպէս կարելի էր,  
գուցէ, կարծել: Նախ չըսէտք է  
մոռանալ որ այս պատմութիւնը  
վերաբերում է XVII դարին, իսկ այն  
ժամանակների սիրոյին գործերը  
առ ելլի շուտ էին առաջ տարւում,

բան մերինները Ամենաստոյդ վը-  
կայութիւններից հաստատ երեւում  
է, որ այն ժամանակներում անկեղ-  
ծութեան տեղ էր անցնում այն,  
ինչ մենք այժմ անպարկեշտու-  
թիւն կը համարենք, և նոյն իսկ  
կարելի է կարծել որ ինչ այսօր  
առարինութիւն են անւանում, այն  
ժամանակներում կեղծաւորութիւն  
էր համարւում: Ինչ էլ որ լինի, մի  
գեղեցիկ երիտասարդի վրա սի-  
րահարւած կինը այն ժամանակնե-  
րում անձնատուր էր լինումնրան,  
առանց երկարու բարակ մտածելու,  
իսկ այս վերջինը այդպիսի համար-  
ձակ վարմունքի համար լուղորովին  
չէր փոխում իր նախկին լաւ կար-  
ծիքը, իրեն սիրող կնոջ մասին:  
Ոչ որ չէր էլ մտածում կարմրել  
այն բանից, ինչ ինքը բնական էր  
համարում: Այդ այն ժամանակ-  
ներն էին. երբ Փրանսիայի պալա-

տականները իրենց զլխարկները,  
գունաւոր փետուրների փոխարէն,  
իրենց սիրուչու մետաքսէ դուշ-  
պայով էին զարդարում, իսկ Եթէ  
մէկը զարմանում էր նրանց այդ-  
պիսի զարդով լուվրում լայտնե-  
լու վրա, առանց բաշելու նրանք  
պատասխանում էին, թէ այդ դուշ-  
պան պատկանում է այն կնոջը, ո-  
րի սիրուց իրենք մեռնում են:

Յամնաայն գեղս Պիտոն այն  
կարգի լնաւորութիւններից էր,  
որ, Եթէ այս գարում էլ ծնւած  
լինէր, գուցէ հազիւ թէ այդ  
խնդրի մասին ուրիշ կարծիք ունե-  
նար: 2ը նայած որ նա շատ ան-  
կարգ ու զիժ կեանք էր վարում,  
թէև նա ընդունակ էր միմի ան-  
գամ ուրիշներին խարել էլ բայց  
և այնպէս ինքն երեն նա երբէք  
չէր խարում: Սրանով ուղում եմ  
ասել որ նա սիրում էր իրերը

ոչ թէ ըստ նրանց երևոյթին, այլ  
նրանց արժանիքի համաձայն, և  
որ, կեղծելու մէջ շատ վարպետ  
լինելով հանդերձ, խարդախութիւ-  
նը նա զործ էր դնում այն ժամա-  
նակ միայն, երբ իր ցանկութիւնը  
ճշմարիտ էր համարում: Եթէ նա  
այժմ մտածում էլ էր, թէ այդ իր  
մօտ ուղարկած առաքելութիւնը  
լոկ միկապրիվի հետևանք էր, այնու  
ամենայնիւ չէր հաւատում, թէ մի որ  
և կոկետի կապրիվլինէր: Քիչառաջ  
ես ասեցի, թէ ո՞րպիսի ինամքով  
ու նուրը էր ասեղնազործւած նրա  
քիսան և թէ ո՞րքան ժամանակ  
զործ գրւած պիտի լինէր նրան  
կարելու համար:

Այն ժամանակ, երբ Ճիգ էր  
թափում երևակայութեամբ մօ-  
տեցնել խոստացւած երջանկու-  
թեան րոպէն, նա մի թրքական  
ամուռնութեան պատմութիւն մը-

տարերից, որ լսել էր ուրիշներից:  
Երբ արեւելցիները կին են առնում,  
Նրանք հարսանիրից յիտո են մի-  
այն տեսնում իրենց նշանածի ե-  
րեսը, որը մինչև այդ ժամանակ  
քողի տակ ծածկւած է լինում թէ  
փեսացուից և թէ ուրիշներից:  
Մինչև հարսանիրի օրը նրանք  
հաւատում են, ինչ որ ծնողներն  
են ասել և ամուսնանում են լոկ  
խօսրի վրա հիմնւելով Ամուսնու-  
թեան հանդէսը կատարւելուց յե-  
տո է, որ հարսնացուն երեսը բա-  
ցում է իր ամուսնու առաջ, որը  
այդ ժամանակ միայն հնարաւո-  
րութիւն ունի իր աչքովը ստու-  
դել, թէ արդեօք կատարւած վա-  
գել, թէ արդեօք կատարւած վա-  
գառը լա՞ւ է թէ վատ: Եւ բանի  
որ արդէն ուշ է յիտ կանգնելը,  
ուստի աւելի լաւ են համարում  
ասել թէ վաճառքը յաջող է: Եւ  
իսկի չէ ել կարելի ասել թէ այս

կարդի ամուսնութիւններն աւելի  
դժբաղդ են լինումքան միւս աե-  
սակները:

Պիպօն էլ Ճիշտ թուրք  
փեսացուի վիճակումն էր զտնուում  
այժմ նա, իշարկէ, չէր սպասում,  
որ իր անձանօթ տիկինը մի անմեղ  
կոյս լինի, բայց եղածիցն էլ  
շատ գոհ էր: Եւ թուրք փեսայի  
համեմատութեամբ այն առա-  
ւելութիւնն էր զգում իր կողմը,  
որ նրա պէս հանդիսաւոր ամուսնա-  
կան կապ չէր, որ պիտի հաստա-  
տէր: Նա կարող էր սպասողական  
վիճակի ու անակնկալութեան  
հրապարակութիւն տրւել առանց գը-  
րանց վատ հետեանքներից վախե-  
նալու, և հէնց այդ միտքը բաւա-  
կան էր նրան կատարելապէս հա-  
տուցում տալու համար, եթէ նոյն  
իսկ իր սպասածը մի բանով էլ  
պակաս դուրս գար: Ուրեմն, Պի-

պօն երեակայեց, թէ այդ գիշերը  
իսկապէս իր հարսանեաց զիշերն  
է, և զարմանալի չէ, որ այդ միտքը  
Նրա հասակում վերջին ծայր ու-  
րախութիւն էր պատճառումնրան:

Հարսանիքի առաջին զիշե-  
րը, վառ երեակայութեան տէր  
մարդու համար, պէտք է յիրաւի  
որ ամենաերջանիկ զիշերներից մէ-  
կը լինի, որովհետև այդ օրւա  
երջանկութիւնը դեռևս իրենից  
առաջ ոչ մի վիշտ չէ տեսնել: Ճիշտ  
է, փիլիսոփաները ցանկանում են,  
որ վիշտն աւելի քաղցրութիւն տա-  
իր հետ բերած երջանկութեանը,  
բայց Պիտօն այն կարծիքին էր,  
թէ վատ սօսւաը չէ կարող ձկանը  
թէ վատ սօսւաը տալ: Նա հեշտ տե-  
թարմութիւն տալ: Նա հեշտ տե-  
սակի զւարժութիւններ էր սիրում,  
բայց և չէր ցանկանում, որ նրանք  
գուհիկ բաներ լինէին. մինչդեռ,  
գժբաղդաբար, համարեա թէ մի

անփոփոխելի օրէնք է, որ լաւ տե-  
սակի զւարժութիւնները միշտ ա-  
ւելի թանկ են նստում: Հարսան-  
եաց զիշերն է միայն, որ այդ օ-  
րէնքից բացառութիւն է կազմում:  
դա միակ զարադան է ամբողջ  
կեանքի մէջ, որ միաժամանակ բա-  
ւականութիւն է տալի մարդուս  
երկու ամենասիրելի հակումներին՝  
ծուլութեանը և բուռն ցանկու-  
թեանը: Այդ այն զիշերն է, երբ  
իր ոտքով տղամարդի սենեակն է  
զալի ծաղիկներով պսակաւորւած մի  
աղջիկ, որ գեռ սէր չէ ճանաչել  
և որի մայրը ամբողջ տասն և հինգ  
տարի աշխատել է աղնւացնել նրա  
հոգին ու զարդարել նրա միտքը:  
Այդ գեղեցիկ արարածի լոկ մի  
բաղցր հայեացըին արժանանալու  
համար միայն գուցէ անհրաժեշտ  
լինէր մի ամբողջ տարի աղաչել  
նրան, այնինչ այժմ, գանձին տիրա-

նալու համար, բաւական է միսյն,  
որ ամուսինը իր գիրկը բանա-  
թայրը հեռանում է. ինքը Աստւած  
էլ է թոյլատրում այդ: Եթէ այդ  
քաղցր գիշերը անց կացնելուց յե-  
տո, մարդիկ ամուսնացած վիճակի  
մէջ չզգային իրենց, ո՞վ չէր ու-  
ղենա ամէն իրիկուն միևնոյն բա-  
նը կրկնել

Պիպօն չէր զզչում, որ  
զանազան հարց ու փորձեր չէր  
արել խափշիկ աղախնից, որովհետեւ  
աղախինները չեն կարող այսպիսի  
պարագաներում իրենց տիկիննե-  
րին չը գովել թէկուզնրանք մահա-  
ցու մեղքից էլ տգեղ լինեն, Արդէն  
պյն երկու խօսքն էլ բաւական  
էին, որ դուրս էին թռել տիկին  
Դորոթէի բերանից: Պիպօն ուզում  
էր միայն իմանալ թէ արդեօք  
սեաչե՞ր է իր անծանօթ տիկինը  
թէ շիկաչեր: Երբ մի կնոջ մասին

արդէն զիտես, թէ գեղեցիկ է, նրա  
մասին հաստատ գաղափար կազ-  
մելու համար, ամենակարեորը մա-  
զերի գոյնը իմանալն է: Պիպօն  
երկար ժամանակ չէր իմանում  
ո՞ր գոյնը գերադասել վերջապէս,  
իր միտքը հանգստացնելու համար,  
նա երեակայեց, որ անծանօթ տիկ-  
նոջ մազերը շագանակագոյն են.  
իսկ դրանից յետո էլ չէր իմա-  
նում, թէ ինչպէս որոշէր աչքերի  
գոյնը. սեաչեա պիտի ենթագրէր,  
եթէ տիկինը սեաչեր լինէր և  
կապուտաչ պիտի ենթագրէր, եթէ  
նա շիկաչեր լինէր: Պիպօն տիկինոջ  
աչքերը կապոյտ երեակայեց, բայց  
ոչ թէ այնպիսի բաց ու անորոշ  
կապոյտ, որ երբեմն մոխրագոյնի  
ու կանաչի է փոխում, այլ երկ-  
նի նման մաքուր, աղուրային կա-  
պոյտ, որ կրքի վայրէկեաններին  
մուգանում է և ագուաւի թևի խիստ

կապոյտ գոյն է ստանում:  
 Այդ գիւմիչաչքերը իրենց  
 նուրբ ու խորը հայեացքով մի լաւ  
 իրեն պատկերապնելուց յետո՝ Պի-  
 պօն երեակայութեամբ նրանց իս-  
 կոյն շըչապատեց ձիւնի նման  
 սպիտակ ճակատով և երկու ԱՀ  
 պեան լեռների գաղաթին երեա-  
 ցող արեգակի ճառագայթների նը-  
 ման, վարդագոյն այսերով: Այդ  
 երկու գեղձի նման քաղցր թշերի  
 մէջտեղը մի այնպիսի նուրբ  
 քիթ երեակայեց, ինչպիսին էր  
 հնագարեան այն արձանի քիթը,  
 որ անւանում էին յունական սէր-  
 պի քթից ցած Էլ՝ մի ալբերան,  
 այդ քթից ցած մեծ և ոչ շատ փորր,— ո-  
 ոչ շատ մեծ և ոչ շատ փորր,— ո-  
 րի միջի երկու շարք մարդարիտ-  
 ների մէջտեղից գուրս էր փչում  
 մի թարմ և փափկասէր շնչառու-  
 թիւն: Ծնօթը շատ լաւ ձև ունէր  
 ու փոքր ինչ կլոր էր. դէմքը պայ-

ծառ բայց թիչ հպարտ. և այդ նա-  
 զելի ու միանգամայն գուրեկան  
 զլուխը, ինչպէս ծաղիկը իր ցողունի  
 վրա, դալար կերպով օրօրում էր  
 փորր ինչ երկար, անխորշոմ և  
 կաթի պէս սպիտակ պարանոցի  
 վրա: Մնում էր միայն, որ այդ,  
 երեակայութեամբ ստեղծւած,  
 պատկերը իրականութիւն ստանար:  
 Հիմա նա կը գա, — մտածում էր  
 Պիպօն. — երբ լցոն սկսի բացւել  
 այստեղ կը լինի: Եւ զարմանա-  
 լին այն է, որ Պիպօն չէր սխալ-  
 ւել ու երեակայութեամբ շատ  
 ճիշտ էր ստեղծել իր ապագա սի-  
 րուհու պատկերը:

Նաւահանգստի մուտքի ա-  
 ռաջ հսկող մարտանաւը երբ իր  
 սովորական թնդանօթն արձակեց,  
 առաւտեան ժամի վեցը աւետելու  
 համար, Պիպօն նկատեց որ իր  
 լամպի լցոն սկսում է կարմրել

իսկ լւսամուտի ապակիները կապտաւուն գցնով են ներկւում. իսկոյն պատուհանի մօտ նստեց. Այս անգամ այլևս կիսախուփ աչքերով չէր, որ դիտում էր իր շուրջը. թէկ ամբողջ գիշերը անքուն անցկացրեց, բայց էլի աւելի թարմ և աւելի լաւ էր զգում իրեն քան երբէք. Արշալոյսն սկսել էր բացւել բայց Վենետիկը դեռ քնած էր. զւարձութիւնների այս ծյլ հայրենիքը այդպէս կանուխ չէ զարթնում. Այդ ժամին,—երբ մեղանում խանութները բացւում են, մարդիկ անց ու դարձ են անում, կառքերը սլանում են,—մեզը դեռ խաղում էր ամայի լճակի վրա և թանձր բողով ծածկում էր լուակաց պալատները. Քամին հաղիւ էր խորշոմեցնում ջուրը. Հեռում, Փիւլինի կողմից մի բանի առագաստներ էին երկում, ու

րոնք օրւա մջերքներն էին րերում ծովերի թագուհու համար: Քնած քաղաքի գագաթին միայն Սուրբ Մարկոսի զանգակատան փայլուն հրեշտակն էր բարձրում երեւմ, և արեգակի առաջին ձառագայթները շողշողում էին նրա ոսկեզօծ թևերի վրա:

Այնուամենայիւ Վենետիկի անհամար եկեղեցիները ահագին աղմուկով հնչեցնում էին առաւտեան ժամը. Հանրապետութեան աղաւնիները զանգակների ձայնից արթնանալով,—որոնց հարւածները զարմանալի բնազդամբ համբել գիտեն նրանք,—արագութեամբ անցնում էին խումբ խումբ Էսկլաւօնների գետը, որ գնան մեծ հրապարակի վրա կուտ ուտելու, որ ամէն օր նրանց համար շաղ էին տալի այդ ժամին: Մառախուղը կամաց-կամաց վերէր բարձրանում,

արեգակը երևաց, Մի քանի ձըկ-  
նորմներ թափ տւեցին իրենց վե-  
րաբեռները և սկսեցին նաւակնե-  
րը մաքրել նրանցից մէկը պարզ ու  
մաքուր ձայնով մի տուն երդ ըս-  
կեց, մի ինչ որ ազգային եղանա-  
կով մի բասօ էլ նրան արձագանք  
տւեց մի առևտրական շէնքի խոր-  
քից, մի ուրիշ ձայն էլ աւելի հեռ-  
ւից միացաւ նրանց և ձայնակցեց  
երգի երկրորդ տունը երգելուն.  
շուտով մի խմբերդ կալմէց, իւ-  
րաքանչեւրը իր պարտիան կատա-  
րելով ու շարունակելով աշխատել.  
և սիրուն երգը ողջունեց առաւօտ-  
եան լոյսին:

Պիպօի տունը գտնւում  
էր Էսկլաւօնների ծովեղթի վրա,  
Հանի պալատից ոչ հեռու, մի փոքր  
ջրանցքի անկիւնում. այդ վայր-  
կեանին այս փոքր ջրանցքի մութ  
խորքում մի գոնդոլի սղոց փայլեց.

Գոնդոլի բթի վրա մի թիավար  
կար միայն, բայց թեթև մակոյկը  
նետի արագութեամբ էր ձեղքում  
ալերը և կարծես թէ մի հաստ  
հայելու վրա էր սլանում ու նրա  
տափակ թին տակտով խրսում էր  
այդ հայելու մէջ: Զբանցքը մեծ  
Ծակից բաժանող կամուրջի տակից  
անցնելու միջոցին գոնդոլը կանգ-  
նեց: Պիմակաւոր մի բարեշուրք  
և սիրուն կազմւածքով կին գոն-  
դոլից գուրս եկաւ և ուղերուեց  
գէպի ծովեղթը: Պիպօն իսկոյն ցած  
իջաւ և գնաց գիմաւորելու: «Այս  
գուրք էր» հարցը եց Պիպօն ցածը  
ձայնով: Պատասխանի փոխարէն  
տիկինը բռնեց երիտասարդի  
առաջարկած թեր և հետեւեց նրան:  
Ծառաներից ոչ մէկը գեռ չէր  
զարթել տան մէջ: Առանց մի խօսք  
արտասանելու, ոտների ծայրի վրա,  
նրանք անցան ցածը սրահակը,

որտեղ գոնապանն էր քնած։ Երի-  
տասարդի բնակարանը գալով, տի-  
կինը նստեց թիկնաթոռի վրա և  
նախ մի քանի րոպէ մոտածողութեան  
մէջ մնաց։ Յետո դիմակը վերցրեց  
և Պիպօն այդ ժամանակ հասկա-  
ցաւ, որ տիկին Դորոթէն նրան  
չէր խարել որ յիրաւի իր առաջ  
տեսնում էր Աւենետիկի ամե-  
նագեղեցիկ կիներից մէկին և եր-  
կու աղնւական տոհմերի ժառան-  
գին, Բեատրիչէ Լօրդադանօին,  
դատախազ Գոնատօի այրուն։

---

V

Անկարելի է խօսքով նկ ա-  
րագրել Բեատրիչէի, երեսը բանա-

լուց յետո, շուրջը գցած հայեացքի  
գեղեցկութիւնը։ Թէև տանութ  
ամսից ի վեր որը և այրի էր  
բայց դեռ քսան ու չորս տա-  
րեկան էր, և թէև նրա այս  
կատարած քայլը շատ յանգուգն  
կարող է թւալ ընթերցողին, բայց  
իր կեանքում նա առաջին անգամն  
էր այսպիսի քայլ անում. որովհե-  
տեւ հաստատապէս յայտնի է, որ  
մինչեւ այդ ժամանակ նա միմիայն  
իր ամուսնուն էր սիրում։ Պէտք  
է ասել նաև, որ այս քայլը նրան  
այն աստիճան էր շփոթեցնում,  
որ կէս ճանապարհից յետ չը  
դառնալու համար, ստիպւած էր  
իր բոլոր ոյժերը հաւաքել այժմ  
նրա աչքերը արտայայտում էին  
միաժամանակ թէ սէր, թէ շփո-  
թութիւն և թէ քաջութիւն։

Պիպօն այնպիսի հիաց-  
մունքով էր նայում նրան, որ ան-

կարող էր խօսել։ Այսպիսի պարագաներում անկարելի է մի կատարեալ զեղեցկուհու վրա նայել առանց զարմանքի ու յարդանքի։ Պիտօն Բեատրիչէին շատ անգամ էր պատահէլ զբօսավայրում և մասնաւոր ժողովներում։ Հարիւրաւոր անգամներ դրւատիք ու գովասանքներ էր լսել նրա գեղեցկութեան մասին։ Բեատրիչէն խորհրդի տասն անգամներից մէկե—Պետրոս Լորեդանի—աղջիկն էր և նշանաւոր Լորեդանի թռոռն էր, այն Լորեդանի, որը այսպիսի եռանդուն մասնակցութիւն էր ունեցել Փակ Փոսկարիի գործի մէջ։ Այդ տոհմը իր հպարտութեամբ շատ նշանաւոր էր Աննեստիկում և ամենքն էլ հաւատացած էին, որ Բեատրիչէն իր պապերից ժառանգել է նրանց հըպարտութիւնը։ Պեռ շատ ջահի

էր Բեատրիչէն, երբ նրան ամուսնացրին դատախալ Մարկօ Դոնատոի հետ, իսկ այս վերջինի մահը նրան թողեց բոլորովին ազատ և իրու մի մեծ կարողութեան տէր։ Հանրապետութեան ամենաբարձր կառավարիչներից շատերն էին ըդձում նրա ձեռքը ստանալ բայց Բեատրիչէն նրանց բոլոր, հաճոյանալու նպատակով արած, ջանքերին պատասխանում էր արհամարհական անտարբերութիւնով միայն։ Մի խօսքով՝ նրա հպարտ և համարեա թէ վայրենի ընաւորութիւնը, այսպէս ասած, առակի կարգ էր անցել։ Այս պատճառով էլ Պիտօնի զարմանքը կրկնազատիկ էր. մի կողմից՝ երբէք չէր համարձակւել ենթադրել թէ իր տարած յաղթութեան խորհրդաւոր առարկան Բեատրիչէ Պոնատօն կարող է լինել իսկ միւս կողմից

այժմ Բեատրիչէին դիտելով, թը-  
ւումէր, թէ առաջին անգամն է  
տեսնում նրան. աշխատան նա տար-  
բեր էր իր առաջւա տեսածից: Սէ-  
րը, որ ամենահասարակ դէմքե-  
րին էլ մի առանձին հրապոյր է տա-  
լի, բնութեան այս գլուխ գոր-  
ծոցը այս աստիճան գեղեցկացնե-  
լով, ներկայանումէր այսրոպէին իր  
ամբողջ զօրութեամբ:

Մի քանի վայրկեան լուռ-  
թիւնից յետո, Պիպօն մօտեցաւ  
տիկնոջը և վերցրեց նրա ձեռքը:  
Փորձեց նկարագրել նրան իր  
զարմանը և շնորհակալութիւն  
յայտնել իրեն պարզեած բաղդա-  
ւորութեան համար. բայց տիկնը  
չէր պատասխանում ու թւում էր,  
թէ չէր լսումնրան: Նա մնացել էր  
անշարժ և կարծես թէ ոչինչ չէր  
տեսնում: բոլոր շրջապատող իրերը  
նրան երազում տեսած բաներ էին

թւում: Պիպօն անդադար խօսում  
էր, չը նայելով որ տիկինը ոչ մի  
շարժում չէր անում: Աերջապէս  
երիտասարդը ձեռքը Բեատրիչէի  
իրանին փաթաթեց և նստեց նրա  
մօտ:

Եթէկ վարդի վրա դուք  
մի համբոյր էիք ուզարկել ինձ  
— ասաց տիկնոջը, — թոյլ տւէք  
ինձ, որ մի աւելի գեղեցիկ և ա-  
ւելի թարմ ծաղկի վրա վերա-  
դարձնեմ ձեզ այն, ինչ երէկ ըս-  
տացա ձեզնից» :

Այս ասելով, համբուրեց  
տիկնոջ շըթունքերը: Բեատրի-  
չէն ըոլորովին չաշխատեց նրան  
արգելել բայց նրա աննպատակ  
թափառող հայեցքը Յանկարծ Պի-  
պօնի վրա կանգ տուաւ: Նա կա-  
մացուկ յետ մղեց երիտասարդին,  
նազելի տիրութեամբ լի գլուխը  
շարժելով, և ասաց.

« Գուք չէր սիրել ինձ,  
յանկութիւնից զատ դուք ոչինչ  
չէր կարող զգալ գէպի ինձ. բայց  
ես ձեզ սիրում և ես յանկա-  
ռում ամենից առաջ ձեր առջե  
ծունկ չոքել » :

Յիբաւի որ կոացաւ էլ.  
Պիպօն իլուր էր աշխատում նրան  
բռնել աղաչելով որ վեր կենա:  
Բեատրիչեն սոզաց նրա ձեռքերի  
միջից և չոքեց պարկետի վրա:

Բոլորովին սովորական բան  
չէ և ոչ էլ հաճելի է կնոջ այս-  
պիսի ստորացած գիրքի մէջ տես-  
նելը. Արշափ էլ դա սիրո նշան  
լինի, այնուամենայնիւ տղամար-  
դոց է միայն վայելում չոքելը.  
Դա մի այնպիսի հանր բայլ է, ո-  
րին անկարելի է առանց իղձա-  
հարութեան նայել և որի շնորհով  
երբեմն գատաւորներն էլ ներուժ  
են յանցաւորին: Պիպօն էլ աւելի

մեծ զարմանքով էր հիանում այդ իր  
տեսած սրանչելի տեսարանի վրա:  
Եթէ րիչ առաջ, Բեատրիչելին իր  
տան մէջ տեսնելով, այնքան  
մէջ յարգանքով էր լցւել գէպի  
այդ կինը այլես ի՞նչ կարող էր  
զգալ նրան իր ոտների մօտ տես-  
նելով. Դոնատօի այրին, Լորեգան-  
ների աղջիկը չոքել էր: Նրա ար-  
ծալթէ ծաղիկներով ասեղնագոր-  
ծըւած մաֆմուրէ շրջազգեստը ծած-  
կել էր յատակը. բողն ու արձակ-  
ւած մագերը փուել էին գետնի  
վրա: Այդ գեղեցիկ շրջանակի մի-  
ջից դուրս էին եկել նրա սպիտակ  
ուսերը և միմեանց միացրած ձեռ-  
ները, մինչդեռ թաց աչքերը բարձ-  
րացած էին գէպի Պիպօն: Երի-  
տասարդը, յուղւած մինչև սրտի  
խորը, մի քանի բայլ ճետ զնաց,  
զգալով որ հպարտութիւնից հար-  
բում է ինքը: Նա աղնւական չէր,

և այն միտքը, թէ Բեատրիչէն իր  
ոտների տակն է դնում պատրի-  
կական գոռողութիւնը, կայծակի  
ազգեցութիւն ունեցաւ նրա հո-  
գու վրա:

Սակայն այդ կայծակը մի  
վայրկեան միայն տևեց և շուտով  
մարեց: Այդպիսի տեսարանի ա-  
ռաջ մարդ աւելի քան գոռողանում  
է: Երբ մենք մի խստակ աղրիւրի  
վրա ենք կուանում, իսկզն մեր  
դէմքը նկարում է նրա մէջ, իսկ  
աւելի ևս մօտենալով, այնտեղ մեր  
ջամուկին ենք տեսնում, որը ջրի  
յատակից գալիս և մեր առջեն է  
կանգնում: Այդպէս էլ մարդու հո-  
գու մէջ սէրը յլացնում է սէր և  
մի հայեացքով բոցավոռումնրան:  
Պիտօն էլ ծնկների վրա ընկաւ:  
Նրանք երկուսով էլ մի քանի  
վայրկեան այդպէս մնացին իրարու  
առաջ չորած ու այդ դիրքի մէջ

փոխանակեցին իրենց առաջին համ-  
բյուները:

Եթէ Բեատրիչէն հօր կող-  
մից Լորեդանների աղջեկն էր, մօր  
կողմից էլ Բիանկա Կոնդարինի  
քաղցր արիւնն էր հոսում նրա ե-  
րակների մէջ: Ոչ մի արարած այս  
աշխարհում այնչափ գեղեցիկ չէ  
եղել որչափ այդ մայրը, որը Ա.ե-  
նետիկի գեղեցկուչիներից մէկն  
էր համարւել նշյնպէս: Միշտ բաղ-  
դաւոր և գեղեցկատեսիլ խաղա-  
ղութեան ժամանակ լաւ կեանք  
վարելու մասին միայն մտածող,  
իսկ պատերս զի՞ ժամանակ հայ-  
րենիրի սիրաչար, Բիանկան կար-  
ծես իր աղջիկների մեծ քյոյրը լի-  
նէր: Նա երիտասարդ հասակում  
մոռաւ և մոռած էլ գեռ գեղեցիկ  
էր մնացել:

Բեատրիչէն նրանից էր սո-  
վորել արւեստները գնահատել ու

սիրել նամանաւանդնկաբչութիւն  
որ Այդ չէ նշանակում, ի հարկէ,  
թէ երիտասարդ այրին երևելի  
գիտնական էր գառել այդ ինդիր-  
ների վերաբերմամբ: Նա Հոռմում  
ու Քլորենցիայումն էր եղել իսկ  
Միքել-Անջելօի գլուխ գործոցնե-  
րը նրա շետաքրքրութիւնն էին  
միայն շարժել իրրե հոռմայեցի,  
միմիայն Ռափայէլին էր սիրում,  
իսկ Ազրիատիկի աղջիկ լինելով,  
Տիցիէնին աւելի էր գերադասում:  
Մինչ նրա բոլոր շրջապատող-  
ները զբաղւած էին պալատական  
ինտրիկներով ու հանրապետու-  
թեան գործերով, նա միմիայն նո-  
րագոյն նկարների մասին էր հոգս  
անում և մտածում էր, թէ արդ-  
եօր ի՞նչ վիճակի մէջ պիտի ընկ-  
նէր իր սիրած արւեստը, ծերու-  
սի Վեչելիօի մահից յետո: Դու-  
քինի պալատում նա տեսել էր

այն նկարը, որի մասին ես խօսե-  
ցի այս պատմութեան սկզբում,  
այն միակ նկարը, որ Տիցիանելօն  
էր նկարել և որը հրդեհի ձարակ  
դառաւ: Այս կտաւի առաջ հիանա-  
լուց յետո, Բետարիչէն տեսել էր  
Պիտօնին, տիկին Դորոթէի տանը,  
և մի անյաղթելի սիրով բռնւել էր  
նրանից:

Նկարչութիւնը Յուլիանոս  
II-ի և Լեռն X-ի գարում արշեստ  
չէր, ինչպէս այսօր է. դա մի  
կրօն էր արտիստների համար, ձա-  
շոկի զարգացող թեան նշան էր  
մեծ „Seigneur“ ների համար,  
Խալիայի փառքն էր, իսկ կանանց  
ըուռն տեսնչանըն էր նա: Եթէ  
փառք կարող էր վատիկանից հե-  
ռանալ Բիւօնառտիին այցելու-  
թեան զնալու համար, Անեստիկցի  
աղնւականի աղջիկն էլ կարող էր,  
առանց ամաչելու, Տիցիանելօնին

սիրել Բայց Քեատրիչէն մի միտք  
էր էր յղացել որը աւելի վեհա-  
ցնում ու համարձակ էր դարձնում  
նրա տենչանքը. մտածում էր  
Պիպօին աւելի քան իր սիրեկանը  
դարձնել, ուզում էր նրանից մի  
հոչակաւոր նկարիչ ստեղծել:  
Խմացել էր, թէ ինչպիսի անկարգ  
կեանք է վարումՊիպօն, և որոշել  
էր նրան գուրս պոկել այդ կանքից:  
Հաւատացած էր, որ Պիպօի մէջ,  
չընայելով նրա անկարգութիւննե-  
րին, գեռ չէ մարել արւեստագի-  
տութեան սրբազնն կայծը, այլ  
մոխրի տակ ծածկւած է միայն, և  
յշս ունէր, թէ սէրը կը վերա-  
կենդանացնի այդ աստւածային  
կայծը: Մի ամբողջ տարի, ամէն  
անգամ Պիպօին պատահելիս և կամ,  
ծովերից անցած ժամանակ, նրա  
պատուհաններին նայելիս, նա  
շարունակ տատանման մէջ էր լնկ-

նում, փայփայելով իր մէջ այդ  
գաղտնի միտքը: Մի տեսակ կա-  
մահաճութիւն նրան միշտ առաջ  
էր մլում, և վերջապէս չքկա-  
րողացաւ դիմանալ ու որոշեց մի  
քիսա ասեղնագործել նրա համար  
և ուզարկել թէն, իրաւ է, նա  
խոստացել էր դրանից աւելի  
առաջ չը գնալ և Պիպօին աւելի  
մօտենալու ուրիշ ոչ մի փորձ չա-  
նել երբէր, բայց, երբ տիկին Պո-  
րոթէն ցոյց էր տւել Պիպօի, նրան  
ուղղած, ոտանաւորը, նա ուրա-  
խութիւնից արտաւելէր: Նա շատ  
լաւ էր համկանում, թէ ինչ վը-  
տանզի կարող էր ենթարկւելինքը,  
իր այդ երազի իրականացման  
փորձը անելով բայց դա կնոջ  
երազ էր, և տանից գուրս գալիս  
ասել էր ինքն իրեն. « Կնոջ  
կամքը—Աստծու կամքն է :

Աեկավար ու յենարան

ունենալով այդ միտքը, եր սէրը  
և իր անկեղծութիւնը, Բեատրի-  
չէն վտանգից զերծ էր համարում  
իրեն, Պիպօի առաջ ծունը իջնե-  
լով, նա իր առաջին աղօթքն էր  
ուղղում դէպի Սէրը: Սակայն  
Բեատրիչէի հպարտութիւնը զոհ  
բերելուց յետո, անհամբեր աստ-  
ածը մի ուրիշ զոհ էլ էր պահան-  
ջում նրանից: Բեատրիչէն այլ ևս  
ը տատանւեց Տիցիանելօի սիրու-  
չին դառնալ, Ճիշտ այնպէս, ինչ-  
պէս թէ նրա կինը լինէր, Նա  
իր վրայից վերցրեց քողը և գրեց,  
սենեակում գտնւող, Աեներայի  
արձանի վրա, յետո՝ Ճիշտ այդ  
մարմարեա չաստւածուհու նման  
զեղեցիկ ու գունատ Բեատրիչէն  
յանձնւեց ճակատադրին:

Գնչպէս որ առաջուց պայ-  
մանաւորւել էին, Բեատրիչէն ամ-  
բողջ օրը Պիպօի մօտ մնաց: Արե-

գակը մայր մանելիս, նրան բերող  
եռդոլը եկաւ յետ տանելու: Նա  
այնպէս էլ ծածուկ դուրս գնաց,  
ինչպէս որ ներս էր մտել: Ծա-  
ռաները զանազան պատրւակներով  
հեռացւած էին. միայն գոնապանն  
էր մնացել տանը: Իր աիրոջ վա-  
րած կեանրին սովոր լինելով նա  
իսկի էլ չզարմացաւ, երբ Պի-  
պօի հետ զիմակաւոր կին տեսաւ  
անցնելիս սրահակով: Բայց չէնց  
որ նկատեց, թէ դուն մօտ կինը  
զիմակի մօրուքը բարձրացրեց ու  
Պիպօն հրաժեշտի համբոյր տւեց  
նրան, կամացուկ առաջ գնաց ու  
սկսեց ականչ գնել:

— Դու ինձ իսկի չէ՞իր  
նկատել, ուրախ կերպով հար-  
ցնում էր Բեատրիչէն:

— Ի՞նչպէս չէ, պատասխա-  
նեց Պիպօն. բայց ես բո՞ դէմքը  
լաւ չէի տեսել հաւատա՛, որ դու

ինքդ էլ չես կասկածում ըստ գեղցկութեան մասին:

—Աչ էլ դու. օրւա նման  
գեղեցիկ ես, հաղար անգամ  
աւելի գեղեցիկ, քան ես էի կար-  
ծում. Արդեօք պիտի սիրե՞ս ինձ:

—Այս, և Երկար:

— Իսկ ես — միշտ՝  
Այս խօսքի վրա նրանք  
բաժանեցին, իսկ Պիպոն մնաց  
դռան չէմքի վրա կանգնած, աչ-  
քերով հետեւելով Բեատրիչէ Դո-  
նատօին տանող զնողուին:

vii

Տասն և հինգ օր արդէն  
անցել էր, իսկ Բեատրիչէն դեռ

ոչինչ չեր խօսել իր յղացած ծրագրի մասին։ Ճիշտը խօսելով, նա ինքն էլ մի քիչ մոռացել էր նրան։ Սիրահարւածների միութեան առաջին օրերը, Սպանիացիների, նոր աշխարհը գտած ժամանակների, ճանապարհորդութիւններին են նմանում։ Խաւ նստած միջոցին նըրանք կառավարութեանը խօստանում էին ճշտութեամբ հետեւել նրա տւած հրաշանդներին, Ամերիկայի յատակագիծը բերել և բաղաքակիթել երկիրը, լայցի, Հենց որ տեղ էին հասնում, անծանօթ երկնքի տեսքը, կուտական անտառները, ուզու և արծաթի հանքերը կորցնել էին տալիս նրանց յիշողութիւնը։ Նորութիւնների յետեւից ընկնելով, նրանք մոռանում էին թէ իրենց խօստաւմները և թէ ամբողջ Եւրոպան, մինչդեռ պատահում էր, որ նրանք ահագին

գանձեր էին գտնում: Այդպէս են  
անում երբեմն և սիրահարւած-  
ները:

Բեատրիչէին արդարացնող  
մի ուրիշ պատճառ էլ կար: Այդ  
տասն և հինգ օրւա ընթացքում  
Պիպօն չէր խաղացել և ոչ մի ան-  
գամ չէր գնացել իշխանուհի Օր-  
սինինց տունը: Դա արդէն իւելի  
գալու սկիզբն էր. գոնէ Բիատրի-  
չէն այդպէս էր մտածում, իսկ ես  
չգիտեմ, թէ արդեօք նա սիալ-  
ւում էր թէ ոչ: Պիպօն օրւա կէսը  
անց էր կացնում իր սիրուհու մօտ,  
իսկ միւս կէսին գնում էր Ափ-  
դոի գինեաներից մէկում Սամո-  
սի գինի խմելու. և ծովին նայելու:  
Նրա բարեկամները այլես նրան  
չին տեսնում. իր բոլոր սովորու-  
թիւնները նա թողել էր և այլ-  
ևս բոլորովին չէր մտածում ոչ ժա-  
մանակի, ոչ ժամերի և ոչ էլ իր

անելիքի մասին: Մի խօսքով՝ գե-  
ղեղկուհու առաջին համբոյրների  
աղղեցութեան տակ նա հարբել  
և խորին մոռացութեան մէջ էր  
ընկել, իսկ այսպիսի պարագանե-  
րում միթէ կարել՞ է որոշել թէ  
մարդը իւելօք է թէ խենթ,  
Ամէն ինչ մէկ խօսքով ասե-  
լով Պիպօն ու Բեատրիչէն միմէանց  
համար էին սուեղծւած: Նրանք  
այդ բանը նկատել էին չէնց ա-  
ռաջին օրից, բայց դեռ էլի ժամա-  
նակ էր հարկաւոր, որ դրան  
աւելի լաւ համոզւէին, իսկ այդ  
բանի համար մէկ ամիսը բոլորո-  
վին շատ չէ: Ուրեմն, անցաւ մի  
ամիս, առանց նկարչութեան մա-  
սին խօսք լինելու, այնինչ սիրու-  
թի վրայից երաժշտութիւն լսե-  
լու և բազարից գուրս զբօսանք-  
ներ կատարելու մասին խօսակցու-  
թիւններ շատ էին լինում: Բարձր

դասակարգի կանայք շատ ան-  
դամ, արւարձանների մի որ և է  
ճաշարանում ստացած, գաղտնի  
հաճախը աւելի գերադաս են հա-  
մարում քան ըուլուարում՝ մի  
փոքր ընթրելը։ Բեատրիչէն  
էր այդ կարծիքին էր և նա  
Բինտավալի տաղաւարների տակ  
Պիպօի հետ տեղ է տեղ կերած, մի  
հատ թարմ ձուկը աւելի լաւ էր  
համարում քան թէ նոյն իսկ դո-  
ժի ճաշերը։ Ընթրելոց յետո  
նրանք գոնդոլ էին նստում ու գը-  
նում էին Հայերի կղզու շուրջը  
պտղատի։ Այդտեղ է, քաղաքի ու  
Լիդօի մէջտեղը, որ ես խոր-  
հուրդ կը տայի ընթերցողին գնալ  
գեղեցիկ լուսնկա գիշեր ժամա-  
նակ, երկնքի ու ծովի միջև, Ա-  
նետիկեան սէր վայելելու։

Մէկ ամսից յետո, երբ  
մի անգամ Բեատրիչէն ծածուկ

Պիպօի մօտ եկաւ, սովորականից  
աւելի ուրախ տրամադրութեան  
մէջ գտաւ նրան։ Պիպօն նախաճա-  
շը նոր էր վերջացրել ու սենեա-  
կի մէջ ման էր գալիս երգելով,  
երբ Բեատրիչէն ներս մտաւ։ Ա-  
րեդակն ընկել էր սենեակի մէջ և  
սեղանի վրա մի արծաթէ աման  
էր պսպղում, լիբը սեքիններով։  
Նախորդ գիշերը Պիպօն խալացել  
էր և հազար հինգ հարիւր պիաստր  
էր տարել պարոն Անսպազիանօից։  
Այդ գումարից գնել էր մի չի-  
նական հովհար, անուշ հոտերով  
լցւած ձեռնոցներ և մի ոսկէ շըշ-  
թա, որ Անսետիկի գործ էր ու  
շատ հիանալի կերպով էր բանւած։  
Այդ բոլորը Պիպօն ամփոփել էր  
մի եղենափայտեա ու սաղափով  
ծածկւած արկղիկի մէջ և առաջար-  
կեց Բեատրիչէին։

Սա առաջին անգամից ուրա-

խութեամբ ընդունեց այդ նէրը,  
բայց քիչ յետու երը իմացաւ, որ  
որ դա առնեած է խաղում տարած  
փողերով, այլևս չուզեց ընդունել.  
Փոխանակ Պիպօի ուրախութեանը  
մասնակցելու, մտածողութեան  
մէջ ընկաւ Գուցէ, մտածում էր  
նա, Պիպօն այլ ևս առաջւա պէս  
էլ չէ սիրում իրեն, քանի որ  
դարձեալ իր առաջւա հաճոյքնե-  
րի յետեկից է սկսել ընկնել: Ինչ  
որ էլ լինէր, նա տեսաւ, որ բոպէն  
հասել է խօսելու և փորձելու յետ  
կանգնեցնել նրան անկարգ կեան-  
քից, որը վերսկսելու վրա էր:  
Քա, իշարկէ, չեշտ ձեռ-  
նարկութիւն չէր: Մէկ ամսւա ըն-  
թացքում արդէն կարողացել  
էր ճանաչել Պիպօի ընաւորու-  
թիւնը: Ճիշտ է, Պիպօն կեանը ի ա-  
ռօրեա ինդիրների վերարերմամբ  
վերին աստիճանի անհոգ մարդ էր

և լաւ էր իմանում «far niente» ի  
գործադրութիւնը, բայց կարեռ  
ինգիբների մշ չեշտ չէր նրա վրա  
իշխելը, նոյն իսկ նրա անհօգու-  
թեան շնորհով: Հենց որ ուզում  
էին նրա վրա իշխանութիւն բա-  
նեցնել փոխանակ հակառակելու  
կամ վիճելու, թողնում էր որ  
խօսեն, իսկ խօսածները բալրովին  
իր վրա չէր առնում: Բեատրի-  
չէն, իր նպատակին հասնելու հա-  
մար, ուրիշ ընթացք բանեց և  
ինդիրեց՝ թէ արդեօր չի ցան-  
կանա իր պատկերը նկարել:

Պիպօն համաձայնեց առանց  
այլ և այլութեան: Միւս օրը  
կտաւ գնեց ու սենեակը բերել տը-  
ւեցիր հօր, կազնու մայափից շինւած  
ու բանդակագործւած, սիրուն նը-  
կարակալը: Առաւօտեան բեատրի-  
չէն վաղ եկաւ մի թուփ լայն վեր-  
նազգեստով փաթաթւած, որը

իսկոյն վայր զցեց վրայից, երբ  
Պիպօն պատրաստւեց գործի նստե-  
լու: Այդ ժամանակ Պիպօնն ներ-  
կայացաւ նա մօտաւորապէս այն-  
պիսի մի հագուստով, ինչպիսին  
Պարիս Բորդոնն էր հազգը ել իր  
թագադրւած Աներային: Ճակա-  
տի վրա թափթփւած ու մարգա-  
րիտների շետ խառնւած մաղերը,  
երկար ալիքաւոր պատրոյգների  
նման, թափւում էին նրա թևերի  
և ուսերի վրա: Մինչեւ գօտին  
հասնող և կուրծքի մէջտեղում  
ոսկէ կոճակով ամրացրած մար-  
գարտեա մանեակը, բաց կուրծքի  
շուրջը գալարւելով, նրա անփոյթ  
եղերագիծն էր նկարում: Կապյ-  
տի ու վարդագոյնի փոփոխող  
տափտահից շըշազգեստը բարձ-  
րացւած ու պնդացւած էր ծնկից  
վերե եաղութիւ գնտասեղով, թող-  
նելով մարմարի նման ողորկած մի

ոտը բաց: Բացի գրանից նա հա-  
գած ունէր թանկագին ապարան-  
ջաններ և, ոսկով բանւած, գու-  
նաւոր մախմուրէ հողաթափներ:

Բորդոնի նկարած Աներան,  
ինչպէս յայտնի է, ոչ այլ ինչ է  
եմէ ոչ մի Անետիկցի կնոջ պատ-  
կեր. իսկ այդ նկարիչը, որը Տի-  
ցիէնի աշակերտն էր, մեծ համա-  
րում էր վայելում Խոալիայում:  
Բեատրիչէն, որը գուցէ և Ճանա-  
լում էր այդ նկարի մօդելին, շատ  
լաւ էր հասկանում, որ ինը նը-  
րանից աւելի զեղեցիկ էր. նա կա-  
մենում էր Պիպօն Նախանձը գրգը-  
ռել և այդպիսով ցցց տալ նրան,  
թէ կարելի է Բորդոնին գերա-  
զանցել „ Դիանայի արիւնը գի-  
տենա, — բացազանչեց երիտասար-  
դը, փոքրիկ Բեատրիչէին դիտե-  
լուց յետո, — որ թագադրւած Ան-  
երան, չաստւածուհու կերպարանք

ընդունած, զինարանում ռատրէ  
ծախող մի կին է. բայց ահա՝ թէ  
ո՞վ է Սիրս մայրը և պատերազմ-  
ների չաստւածի սիրուչին:”

Չատ հասկանալի է որ այս-  
պիսի գեղեցիկ մօդեր տեսնելով,  
Պիպօի առաջին հոգով նստել ու  
նկարելու չէր: Ինաւրիչէն մի վայր-  
կեան ինքն էլ վախեցաւ իր չա-  
փականց գեղեցիկ լինելուց և մտա-  
ծեց, թէ ըստ լինի՞ վատ միջոց էր  
ընտրել բարեփոխութեան ծրագիր-  
ները յաջողեցինելու համար: Ապ-  
կայն նկարը սկսւած էր արդէն,  
թէ սկզբի գծերը մտքամուր  
ձեռքով էին նկարւած: Պատահ-  
մամբ Պիպօն վրձինը ձեռքեց վայր  
զցեց: Ինաւրիչէն գետնից բարցրա-  
ցրեց և սիրեկանին վերադարձնե-  
լով ասաց: „Քո հօր վրձինն էլ մի  
անդամ ձեռքիցը այսպէս վայր ըն-  
կաւ, Աարլունինատը գետնից բարձ-

րացրեց և նրան տւեց: Ես Էլ եմ  
ուզում Կեսարի պէս անել թէ և  
թագուհի չեմ:”

Պիպօն միշտ մի տեսակ ան-  
հուն սէր և հրապոյր էր տածում  
գեպի իր հոյրը, և երբէք առանց  
ակնածութեան չէր խօսում նրա  
մասին: Այդ յիշողութիւնը ազդեց  
նրա վրա, վեր կացաւ տեղից  
ու մի պահարան բաց արեց: Ահա  
այն վրձինը, որի մասին հիմա յի-  
շեցիր, ասաց վրձինը ցոյց տա-  
լով: այն օրւանից, երբ աշխարհի  
կէսին տիրողը ձեռք էր գիպցրել  
սրան, իմ խեղճ հայրը իբրև մա-  
սունք էր պահում:”

— Իուք յիշում էր այդ  
գեպը, հարցրեց Ինաւրիչէն, և  
կարո՞ղ էր դրա պատմութիւնն  
անել:

— Այդ տեղի էր ունեցել  
Բոլոնիայում, պատասխանեց Պի-

— 104 —

պօն։ Փափը և թագաւորը մի տես  
սակցութիւն էին ունեցել։ Փըս-  
րենցիայի իշխանութեան վերաբեր-  
եալ մի ինչ որ ինդիր կար, կամ,  
աւելի ճիշտ է ասել ինդիրը Ի-  
տալիայի ճակատագիրը որոշելու  
մասին էր։ Փափին ու Աարլոս-Աին-  
տին տեսել էին պատշգամի վրա  
միասին խօսելիս և, նրանց ըոլոր  
խօսակցութեան ժամանակ, ամրող  
քաղաքը լոռութեան մէջ էր թաղ-  
ւել։ Մէկ ժամից յետո ամէն ինչ  
վճռած էր։ Լոռութիւնը տեղի է  
տալիս մարդոց ու ձիերի ահազին  
աղմուկին։ Նինելիքի մասին ոչ ոք  
ոչինչ չէ իմացել և ըոլորն էլ ի-  
րարանգումի մէջ են ընկել կարե-  
լիին չափ շուտ իմանալու համար,  
մինչդեռ հրամայւած է եղել խո-  
րին գաղտնապահութիւն պահպա-  
նել։ Բնակիչները հետաքրքրու-  
թեամբ ու ահով սկսել են դիտել

երկու պետութիւններին էլ պատ-  
կանող, օֆիցերների ամէն մի շար-  
ժումը։ Խտալիան բաժանելու, աբ-  
սորանքի և նոր վարչութիւն հաս-  
տատելու մասին է խօսակցութիւն  
լինում։ Հայրս էլ մի գեղեցիկ մեծ  
նկարի վրա աշխատելիս է եղել  
նա, սանդուխի վերեռում կանգ-  
նած, նկարելիս է լինում, երբ  
թիկնապահները նիզակները ձեռ-  
ներին դուռը բանում ու շարուում  
են պատի մօտ։ Պաժը ներս է մըտ-  
նում ու բարձր ձայնով կանչում.  
«Կեսարը»։ Մի քանի րոպէից թա-  
գաւորն է յայտնուում, բաճկոնի  
մէջ սեղմաւած ու կարմիր բեկերի  
տակից ժպտալով։ Հայրս, զարմա-  
ցած ու միանդամայն հիացած այդ  
անսպասելի այցելութիւնից, սկը-  
սում է սանդուխներից արագ  
վայր իջնել նա ծեր էր։ Ճաղից  
բռնած միջոցին, վրձինը ձեռքից

վայր է ընկնում: Ներկա եղող-  
ները մնում են անշարժ, որովհետեւ  
թագաւորի ներկայութիւնը: Նրանց  
մի մի արձան էր դարձրել: Հայրս  
ամաչում է իր դանդաղկոտութիւ-  
նից ու անշնորհքութիւնից, բայց  
և վաֆենում է շտապել որ չը վե-  
րաւորւի: Կայլոս—Կինտը միքանի  
քայլ առաջ է անցնում, ծանր կեր-  
պով կռանում ու բարձրացնում է  
վրձինը: «Տիցիէնը, ասում է նա  
պարզ ու տիրապետական ձայնով,  
Տիցիէնը արժանի է, որ Անսարը  
Նրան ծառայութիւն մասուցանէ»,  
և աննման վեհութեամբ տալիս է  
վրձինը հօրս, որը մէկ ծնկան վրա  
չորսում ու այնպէս է ընդունում:—  
Եյս պատմութիւնից յե-  
տու, որը Պիտօն չը կարողացաւ  
անել առանց յուղելու, Բեատրի-  
չէն մի առժամանակ լուր մնաց.  
Նա գլուխը ծռել ու այնքան մո-

լորւած էր երեսում, որ Պիտօն  
հարցրեց, թէ ինչի մասին է մտա-  
ծում:

« Ես մի բան եմ մտածում,  
պատասխանեց Բեատրիչէն: Կար-  
լոս-Աինտը այժմ մեռած է, իսկ նը-  
րա որդին Սովանիցի թաղաւորն  
է: Խնչ պիտի ասէին Գիլիպ Ի-ի  
մասին, եթէ նա, փոխանակ իր հօր  
սուրը գործ ածելու, թողնէր որ  
պահարանի մէջ ժանդոտի»:

Պիտօն Ժատաց. թէև Բեատ-  
րիչէի միտքը հասկացաւ, բայց  
էլի հարցրեց, թէ արդեօք նա ի՞նչ  
է ուղղում դրանով ասել:

— Ես ուղումեմ ասել, պա-  
տասխանեց Բեատրիչէն, որ զուէլ  
թագաւորի ժառանգ ես, որովհետեւ  
եթէ Բորգոնը, Մորետօն, Թոմա-  
նիոն լաւ նկարիչներ են, Տիկոտորէն  
և Զիորչիօն արտիստներ էին, Տի-  
ցիէնը թագաւոր էր, և ո՞վ է այժմ

նրա գայի իսոնը կրողը:

— Իմ Օրացիօ եղբայրը Եթէ ապրէր, միծ նկարիչ կը լինէր,  
պատասխանեց Պիպօն:

— Ի հարկէ, շարունակեց  
Բեատրիչէն և աչա թէ ինչ պի-  
տի ասեն Տիցիէնի որդիների մա-  
սին., Մէկը մեծ նկարիչ կը լի-  
նէր, եթէ ապրէր, իսկ միւսը՝ եթէ  
կամենար:

— Դու այդպէ՞ս ես կար-  
ծում, ասաց Պիպօն ծիծաղելով. Էս  
լաւ, ուրեմն թող նաև աւելացնեն.  
“Բայց Բեատրիչէ Գոնատօի հետ  
գոնդոլով զբոնելը աւելի գերա-  
գաս էր համարու մ.”

Բեատրիչէն, ի հարկէ, ու-  
րիշ տեսակ պատասխան էր սպա-  
սում: ուստի մի փոքր այլայլեց:  
Բայց չը կորցրեց իր արիութիւնը  
այլ էլ աւելի լուրջ կերպարանը  
ընդունեց:

“Ասիր ինձ, մի ծիծաղիր,  
ասաց նա, այն միակ նկարը, որ  
դու նկարել եր, բոլորին էլ հիա-  
ցնում էր: Մէկը չը կա, որ չափ-  
ոսի նրա կորուստը, բայց քո վա-  
րած կեանքը Դոլֆինի պալատում  
պատահած հրդեհից էլ վատ րան  
է, որովհետեւ այդ կեանքը քեզ  
է լափում: Միմիայն զւարձանալու  
մասին ես մտածում դու ու չես  
խորհում, որ այն, ինչ ուրիշներին  
հաճոյը է պատճառում, քեզ միայն  
նախատինը է բերում: Հարստա-  
ցած վաճառականի որդին կարող  
է զար խաղալ, բայց ո՛չ Տիցիանե-  
լոն: Ինչի՞ է պէտք, թէ դու մեր  
ամենածեր նկարիչների գիտու-  
թիւնը ունիս, քանի որ այնպիսի ե-  
րիտասարդական կեանք ես վարում,  
որ նրանցից ե ոչ մէ կը չէ վարել:  
Յաջողութիւն ունենալու համար  
հարկաւոր է փորձել իսկ դու ոչ

մի փորձ չես անում: Քո ընկերները  
քեզ խարում են, իսկ ես պարտք  
եմ կատարում ասել քեզ, որ  
դու անարգում ես քո հօր յիշա-  
տակը, որը քեզ մինոյն բանը պի-  
տի առէր, ինչոր այժմ ես եմ ա-  
սում: Քանի դու հարուստ ես, միշտ  
կը գտնեն այնպիսի մարդիկ, որ  
օգնեն քեզ սնանկանալու. բանի գե-  
ղցիկ ես, կանայք կը սիրեն քեզ.  
բայց ի՞նչ կը լինի, եթէ քեզ ձըշ-  
մարտութիւնը ասող չը լինի, մինչ  
դու երիտասարդ ես: Ես ձեր սի-  
րուհին եմ, իմ թանկագին տէր,  
բայց ես ցանկանում եմ և ձեր սի-  
րիցեալը լինել: Երանի թէ դուք աղ-  
քատ ծնւած լինէիք: Եթէ դուք  
ինձ սիրում էք, պէտք է աշխատէք:  
Քաղաքի հեռաւոր թաղում ես մի  
առանձնացած, փոքրիկ, մի յար-  
կանի տուն եմ տեսել թթէ ցան-  
կանում էք, այդ տունը կահաւո-

րել կը տանք մեր ճաշակով կ երկու  
չատ րանալի կունենանք. մեկը ձեզ  
չամար, իսկ միւսը ինձ մօտ պա-  
հելու: Եյնտեղ մենք ոչ ոքից չենք  
վախենա և բոլորովին աղատ կը  
լինենք. դուք մի նկարակալ բե-  
րել կը տաք և եթէ խոստանում  
էք գալ ու օրական երկու ժամ  
միայն աշխատել, ես ամեն օր այն-  
տեղ ձեզ մօտ կը գամ: Բաւակա-  
նաշափ համբերութիւն կունենա՞ք  
գրա համար: Եթէ համաձայնէք,  
այն ժամանակ մի տարուց յետո,  
երբ հաւանական է ինձ այլ ևս  
չէք սիրի, դուք լնտելացած կը  
լինիք աշխատանքին և Խոալիա-  
յում մի մեծ անուն էլ կաւելանա:  
Խոկ եթէ մերժէք, ես չեմ կարող  
դադարել ձեզ սիրելուց, բայց դուք  
դրանով կապացուցանէք, որ ինձ  
չէք սիրում:,,

Բոլոր խօսած ժամանակ

Բեատրիչէն դողում էր, Աախենում  
էր իր սիրեկանին վիրաւորել  
և միենոյն ժամանակ մի առանձին  
պարտականութիւն էր զգում ար-  
տայայտել իր բոլոր մտքերը. այդ  
վախից ու հաճոյանայու ցանկու-  
թիւնից նրա աչքերը փայլում էին:  
Նա այժմ ոչ միայն Աեներային, այլ  
Մուսային էլ էր նմանում: Պիզոն  
իսկոյն չը պատասխանեց նրան-  
այս դիրքի մէջ Բեատրիչէին նա  
այնքան գեղեցիկ էր գտնում, որ  
մի քանի րոպէ այլայլութեան մէջ  
թողեց նրան: Ճիշտը ասելով՝ Բե-  
ատրիչէի ձայնի ելեկջներին էր  
աւելի ականչ դրել, քան թէ  
նրա արտասանած խրատներին.  
բայց այդ թափանցող ձայնը դիւ-  
թել էր նրան: Բեատրիչէն իր ամ-  
րող հոգու խորրից էր խօսում.  
խօսում էր Աենենտիկի կնոջ բաղց-  
րութեամբ, Տոսկանի ամենամա-

քուր բարբառով: Երբ մի կենդա-  
նի երգ գեղեցիկ բերնից է դուրս  
գալի, մենք շատ էլ ուշադրութիւն  
չենք դարձնում նրա խօսքերին. Եր-  
բեմն նոյնիսկ հաճելի է պարզ չը  
լսել խօսքերը, այլ հիանալ միմիայն  
երգի երաժշտութիւնով: Համարեա  
թէ միենոյն բանն էլ Պիզոն ա-  
րեց: Առանց մտածելու թէ իրենից  
ինչ է պահանջնում, մօտեցաւ  
Բեատրիչէին, մի համրոյր գրոշմեց  
նրա ձակատին և ասաց.

„Համաձայն եմ, ինչ որ  
էլ կամենաս. Հրեշտակի նման գե-  
ղեցիկ ես դու:“

Պայմանաւորւեցին, որ Պի-  
զոն այդ օրւանից կանոնա-  
ւորապէս պիտի աշխատի. Բեատրի-  
չէն կամեցաւ, որ նա զրաւոր խոս-  
տում տա: Հանեց իր յիշատետրը  
և, սիրահարւածի հպարտութեամբ  
մի քանի տող նրա մէջ զրելով,

ասաց.

„Գիտե՞ս, մենք Լորեդաններս հաշիւների մէջ շատ ճշտապահ ենք\*): Ես քեզ նշանակում եմ իբրև իմ պարտապանը, որ մի ամբողջ տարւա ընթացքում պիտի

\*) Եթե Քոսկարին գտափ ենթարկ եց, Յակով Լորեդանը, Պետի որդին հաւատացած էր կամ ուզում էր հաւատար թէ իր ընտանիքի կրուստի գրեժը առելէ: Իր հաշւատնորի մէջ (նա եւ էր վաճառականութեամբ պարապում ինչպէս այդ ժամանակւա համարեա բոլը պատրիկները) նա իր ձեռքով պարտապանների կարգն էր անց կացրել դոժի անունը՝ „Իմ հօր և իմ հօր եղաօր մահւան համար. գրւած էր այնտեղ: Այդ տողը դիմացը մի երեսում նա ոչինչ չէր դրել և թողել էր սպիտակ, ուղինաւով դրանով հասկացնել թէ դեռ պարտը վճարւած չէ: Եւ, մերակ, դոժի կրուստից յևոռ, նա այդ դաստարկ երեսի վրա գրեց. Ի հա Pagta-պարտը վճարւած է: (Darn' Աւետորիկի Հանրապետութեան պատմութեանը:) 8ակ. կեղ:

օրական երկու ժամաշխատես. օտորագրիր ու Ճշութեամբ վճարիր պարտը, որ իմանամ թէ ինձ սիրում ես:,,

Պիտօն սիրով ստորագրեց: Բայց, ի հարկէ, ասաց նա, ամենից առաջ ես պիտի սկսեմ քո պատկերը նկարելու

Բեատրիչէն համբուրեց նրան և ասաց ականջից.

Ես էլ քո պատկերը պիտի շինեմ, գեղեցիկ ու շատ նմանող պատկեր, և ոչ թէ անշունչ այլ կենդանի:,,

## VII

Պիտօնի և Բեատրիչէի սկըր սկզբում գետնից բխող աղբերակի կարելի էր նմանեցնել այժմ

պատրիկ անունը կրողները պի-  
տի զայրանային գրա դէմ: Նոյն-  
իսկ այնպիսիները, որոնք ամենա-  
հաշտ աչքով էին նայում գաղտնի  
սիրաբանութիւնների վրա և ո-  
րոնք ոչ մի վատ բան չէին տես-  
նում նրա մէջ, որ ազնւական  
նա առւակի էր նմանում, որը կա-  
մաց կամաց մաղւելով իր համար  
առաջի մէջ ճանապարհ է բաց ա-  
նում: Եթէ Պիպօն ազնւական լի-  
նէր, իչարկէ, կամուսնանար Բեատ-  
րիչէի հետ, որովհետեւ քանի  
նրանք աւելի էին ճանաչում իրար,  
այնքան աւելի էին սիրում միմիանգ.  
սակայն, չը նայելով որ Ակցելիո-  
ները Փրիուլացի Կաղորի մի շատ  
լաւ ընտանիքից էին, այնուամե-  
նայնիւ այդ միութիւնը անկարելի  
էր: Ոչ միայն Բեատրիչէի մօտիկ  
աղքականները պիտի հակառակէին  
այդ բանին, այլև բօլոր Անեներիկի

տի կինը նկարչի սիրուչին դառ-  
նար, այդպիսիներն անգամ երրէք  
չը պիտի ներէին նոյն այդ կողը,  
եթէ սա ամուսնանար իր սիրե-  
կանի հետ: Այդպիսի նախապա-  
շարումներ էին տիրում այն ժա-  
մանակ, որը յամնայն գէպս աւելի  
լաւ էր, քան մեր ժամանակները:  
Փորբիկ տունը կահաւոր-  
ւած էր: Պիպօն իր խոստումը կա-  
տարում էր և ամէն օր գնում էր  
այնտեղ Ասել թէ նա աշխատում  
էր, դա չափազանց կը լինէր, բայց  
նա ցոյց էր տալիս կամ, աւելի  
լաւ է ասել, կարծում էր, թէ աշ-  
խատում է: Իսկ Բեատրիչէն աւե-  
լի բան կատարում էր իր խոստու-  
մը, վասնորո նա միշտ առաջինն  
էր այնտեղ գալի: Պատկերը սկըս-  
ւած էր: գործը շատ դանդաղ էր  
առաջ գնում, բայց նա նկարակա-  
լի վրա էր և, չը նայելով որ նը-

րան մեծ մատամբ ձեռք դիպցնող չը կար, գոնէ մի վկա էր թէ՛ նրանց սերը խրախուսելու և թէ՛ Պիպօի ծուլութեանը ներելու համար:

Ամէն առաւօտքեատրիչէն մի փունջ էր ուղարկում խափշիկի ձեռքով իր սիրելանին, որ նա այդպիսով առաւօտները վաղ վեր կենալ սովորի: „Նկարիչը պէտք է արշալոյսին ոտքի վրա լինի, առում էր Բեատրիչէն, արեգակի լոյսը նկարչի կեանքն է ու նրա արևեստի իսկական տարրը, որովհետեւ առանց լոյսի նա ոչինչ չէ կարող լինել:“

Պիպօին այդ խորհուրդը իրաւացի էր թւում, բայց դրա գործադրութիւնը շատ դժւար էր համարում նա: Պատահում էր, որ խափշիկի բերած վունջը դըդում էր շաքարաջրով լի բաժա-

կի մէջ, որը նրա զիշերւա սեղանի վրա էր գտնվում, և ինքը վերստին ընում էր: Երբ փոքրիկ տունը գնալիս անցնում էր իշխանուհի Օրսինիի լուսամուտների տակից, նրան թւումէր թէ իր փողերը գրավանում բըցրըցում էին: Մի անգամ էլ զրօւավայրում սըր Անսպաղիանօին պատահեց, որը հարցրեց, թէ ինչու նա այլ ես չէ երեսում:

„Ես երդւել եմ այլ ես զարատուփ չառնել ձեռքս, պատասխանեց Պիպօն, և ոչ թղթի ձեռք տալ: Իսկ բանի որ պատահել ենք, եկէր մօտներս ունեցած փողերով խաչ (թէ զիր<sup>3</sup>) խաղանք:“

Սըր Անսպաղիանօն, որը,  
<sup>3)</sup>խաչ և գիր գրամփ երկու երեսներն են, իսկ այդպէս կոչում է այն խաղը որ խաղացողներից մէկը զցում է դրամը ողի մէջ, իսկ միւսը պիտի գուշակէ, թէ ո՞ր երեսի վրա վացր կընկնի նա: Դո. թ.

չը նայած ծեր ու օտար լինելով  
էլի ոչ մի խաղից բաշւող չէր,  
իսկի էլ ըլ մերժեց այդ ա-  
ռարջակութիւնը: Նա մի պի-  
աստր նետեց օգի մէջ, մի ե-  
րեսուն հատ սերին տարւեց  
և շատ էլ գոհ ըլ մնաց իր  
խաղից: Ափսոս, մտածեց Պիպօն,  
որ այս բոպէիս այլ ևս չեմ խա-  
ղում Ես հաւատացած եմ, որ Քեատ-  
րիչէի քիսաի շնորհով իմ բաղ-  
զը էլի պիտի բանէր և ութ օր-  
ւա մէջ կը կարողանայի յետ տա-  
նել այն բոլորը, ինչ որ տարւել  
էի երկու տարւա ընթացքում:

Այնուամենայնիւ մեծ հա-  
ճութեամբ էր հնաղանդում իր  
սիրուհուն: Նրա փոքրիկ արհես-  
տանոյը մի շատ ուրախ և հանդիսա-  
բան էր ներկայացնում: Այնտեղ  
նա իրեն իրրե մի նոր աշխար-  
հում էր զգում, ուր սակայն հին

յիշատակներ էլ կային, վասնորո՞  
կտաւն ու նկարակալը իր ման-  
կութիւնն էին յիշեցնում: Մենք  
առհասարակ շատ շուտ ենք ըն-  
տելանում այն առարկաներին, ո-  
րոնք մի ժամանակ մեղընտանի են  
եղել և անցեալի յիշողութիւն-  
ների շնորհով անդիտակացարար սի-  
րում ենք այդ առարկաները: Երբ  
Պիպօն վերցնում էր ներկակալը  
ու զեղեցիկ առաւտեան ժամե-  
րին նրա վրա փշրում էր փայլուն  
ներկերը, յետո երբ նայում  
էր, թէ ինչպէս այդ ներկերը կար-  
գով շարւել են ու իր ձեռքի տակ  
իրարու պիտի խառնւեն, նրան թը-  
ւում էր թէ իր յետեռում հօր կոշտ  
ձայնն է լսում, որը երբեմն կան-  
չում էր, Դէչ, ծոյլ, ինչի՞ մա-  
սին ես մտածում: Տես որ շուտ  
վերջացնես այդ դործը, Այդ յի-  
շելիս, Պիպօն գլուխը շուռ էր տա-

լե. բայց Տիցիէնի խոժոռ զէմքի  
տեղ Բեատրիչէնին էր տեսնում,  
որը, թեներն ու կուրծքը մերկ,  
Ճակատը մարգարիտներով զար-  
դարւած, պատրաստում էր զիրք  
բոնել և ժապտալով անում էր  
նրան.

ո Ե՞րբ կը բարեհաճէք,  
տէ՛ր իմ:

2ը պէտք է կարծել թէ  
Պիպօն անտարբեր էր վերաբեր-  
ւում գէպի Բեատրիչէի խորհուրդ-  
ները, ինչ որ սա երբէք չէր զլա-  
նում նրան տալ Երբեմն Վենետի-  
կի մեծ վարպետների ու նրանց,  
Իտալական շկոլաների մէջ բռնած,  
փառաւոր գիրքի մասին էր խօ-  
սում Բեատրիչէն, երբեմն, յիշե-  
ցնելով արևեստի նախկին բարձ-  
ձրութիւնը, նա Պիպօն այժմեւն  
նրա անկորմն էր ցցց տալիս: Եւ  
Բեատրիչէն աւելի քան իրաւացի

էր այդ կողմից, որովհեաւ Վենե-  
տիկն էլ այդ ժամանակ նյոյն էր  
անում, ինչ որ Պլորենցիան էր ա-  
րել Վենետիկը այժմ սկսել էր ոչ  
միայն իր փառքը, այլև գէպի այդ  
փառքը եղած յարգանքը կորցնել:  
Միրել Անչը ու Տիցիէնը ապիկը  
էին երկուսով մօտ մի դար, իրենց  
հայրենակիցներին արւեստներ սո-  
վորեցնելուց յետո, նրանք այն-  
չափ էրկար էին պատերազմը մղել  
անկանոնութիւնների գէմ, որչափ  
կարող է մարդկացին ոյժը թշլա-  
տրել բայց այդ ծերացած երկու  
սիւները վերջապէս խորտակւել  
էին: Նորութիւններ մագնող տը-  
գէտներին մինչև երկինք բարձրա-  
ցնելու պատճառով, մօռացութեան  
էին տրուում գեղ նոր պատանքւած  
մէծ ուսուցիչները: Յթեսչիան, Պրե-  
մոնը նոր շկոլաներ էին ստեղծել  
ու աւելի բարձր էին հաշակում

դրանց բան հին շկօլաները։ Տի-  
ցիւնի աշակերտներից մեկի որդին  
Պիպօն տւած աւելի անունը սե-  
փականեցնելով, նշյն իսկ Աւենե-  
տիկի մէջ իրեն էլ Տիցիւներօ էր  
անւանում նրա նման և պատրի-  
արքական եկեղեցին լցնում էր  
իր ամենաանձաշակ նկարներովը։

Եթէ Պիպօն անտարբեր  
էր գէպի հայրենիքի նախատինըը,  
գոնէ նա պիտի զայրանար այդ  
խայտառակութեան դէմ Խրբ նրա  
ներկայութեամբ մի որ և է վատ  
նկար էին գովարանում, կամ երբ  
նա մի որ և է եկեղեցում իր հօր  
գլուխ գործոցների շարքում մի ան-  
ձոռնի կտաւ էր նկատում, այն-  
պէս էր վրդովւում, ինչպէս որ կա-  
րող է պատրիկը վրդովւել ապօրի-  
նի զաւակի անունը ոսկի գրքի մէջ  
գրւած տեսնելիս։ Բեատրիչէին  
հասկանալի էր Պիպօն այդ զգա-

ցումը. չէ՞ որ բոլոր կանայք բիչ  
թէ շատ Պալիլայի բնազդումն  
ունեն, գիտեն Սամսոնի մա-  
զերի գաղտնիքից ժամսնակին օգ-  
տուել։ Սրբազն անունները յար-  
գելով հանգերձ, Բեատրիչէն՝ աշ-  
խատում էր մի մի անգամ միջակ  
նկարիչներից էլ ոմանց գովիել։ Ի  
չարկէ, նրան շատ էլ հեշտ չէր  
այդպիսի հակասութիւնների մէջ  
ընկնելը, բայց աշխատում էր  
ճարպկութեամբ լուրջ կերպարանք  
տալ իր կեղծ գովասանըներին։ Այս  
եղանակով շատ անգամ յաջո-  
ղում էր Պիպօն զայրայթը գրգուել  
և նկատում էր, որ այդպիսի բո-  
պէններում Պիպօն մի առանձին ե-  
ռանդով էր գործի նստում։ Այդ  
բոպէններում նրա մէջ վարպետի  
տոկունութիւն էր ծագում և նա  
ոգերուում էր անհամբերութիւ-  
նից։ Սակայն նրա անհոգ բնաւո-

բութիւնը շուտով գերակշռում էր  
և յանկարծ դէն էր զցում վըր-  
ձինը: « Գնանը մի բաժակ կիւրո-  
սի զինի խմելու, ասում էր նա, և  
այլ ևս չը խօսինը այդմիմար բա-  
ների մասին: »

Եթէ մի ուրիշը լինէր Բեատ-  
րիչէ տեղ, գուցէ շուտով կը վհատ-  
էր այդպիսի փոփոխամտութիւ-  
նից. բայց պատմութեան մէջ  
քանի՛ քանի՛ ամենայամառ ատե-  
լութեան պատմւածներ ենք մենք  
տեսնում. ուրեմն զարմանալու չէ,  
որ սէրն էլ կարողէ տուկունութիւն  
տալ մարդու: Բեատրիչէն միբանի  
մէջ շատ վստահ էր, որ միանգա-  
մայն ճշմարիտ է, այն է՝ թէ սո-  
վորութիւնը ամեն բան կարող է  
անել և աչա՛ թէ որտեղից էր այդ  
համոզումը գյացել նրա մէջ: Նա  
ականատես էր եղել, թէ ինչպէս  
իր հայրը, որը չափազանց հարաստ

և թոյլ առողջութեան տէր մարդ  
էր, ծերութեան հասակում ամե-  
նածանը աշխատանքների էր են-  
թարկում իրեն, չոր ցամաք հաշիւ-  
ների մէջ գլուխ էր ուռեցնում, թէ  
ինչ է՝ մի քանի սեքին էլ աւելա-  
ցնի իր ահագին կարողութեան  
վրա: Բեատրիչէն շատ անգամ  
էր ազաքել հօրը, որ հանգիստ  
մնա, բայց ոա միշտ միենոյն պա-  
տասխանն էր տալի, թէ աշխատան-  
քը գեռ մանկութիւնից մնացած  
սովորութիւն է, որը իր համար մի  
անհրաժեշտ պահանջ է դառել և  
թէ ինքն պյտ սովորութիւնը չի  
թողնի, քանի կենդանի է: Այս  
օրինակից փորձւած լինելով, Բեատ-  
րիչէն չէր ցանկանում կանխաւ  
ոչ մի որոշում անել մինչև որ  
Պիպօն կանոնատոր աշխատանքի  
չը սովորէր: Նա մտածում էր: Թէ  
փառասիրութիւնն էլ մի շատ պ-

նիւ տենչէ, որը նյնչափ զօրաս  
որ է, որչափ և փողասիրու-  
թիւնը:

Այս կերպով մտածել սխալ  
չէր, սակայն դժւարութիւնը նրա-  
նումն էր, որ Պիպօի մէջ մի լու սո-  
վորութիւն մտցնելու համար հար-  
կաւոր էր նախ մի ուրիշ վատ  
սովորութիւնից յետ կանգնեցնել  
նրան: Բացի դրանից՝ այնպիսի վատ  
խոտեր կան, որ առանց մեծ դըժ-  
ւարութեան են պոկում գեանից,  
այնինչ թղթախաղը այդ կարգի  
խոտերից չէ. գուցէ գա հէնց միակ  
մոլութիւնն է, որ չէ ընկճում  
սիրո առաջ, որովհետեւ շատ է  
պատահել, որ փառասէրները, անա-  
ռակներն ու կրօնամոլները զիջա-  
նել են սիրող կնոջ կամքի առաջ,  
բայց խաղամոլներին շատ հազիւ  
է պատահում այդ: Եւ դա շատ  
պարզ է: Ինչպէս որ դրամի վեր-

ածւած մետաղը համարեա թէ ա-  
մեն կարդի հաճայըներ է ներ-  
կայացնում իրենից, այնպէս էլ թըլ-  
թախաղը համարեա թէ ամէն տե-  
սակյուղմունքներ է ամփոփում իր  
մէջ. ամեն մի թուղթ կամ վար զը-  
ցելով տարբում ու տանում են մի  
յայտնի բանակութեամբ ոսկու  
կամ արծաթի դրամներ. իսկ այդ  
դրամներից ամեն՝ մէկը մի յայտնի  
դւարձութիւն է ներկայացնում:  
Աւրեմն տանողի մէջ բազմաթիւ  
յանկութիւններ են յղանում և նա  
ոչ միայն դրանց ամրողապէս գո-  
հացնելու յետեկիցն է ընկնում, այլ  
և աշխատում է նոր ու նոր  
ցանկութիւններ ստեղծել իր հա-  
մար, վստահ լինելով, թէ կը կա-  
րողանա բոլորին էլ բաւականու-  
թիւն տալ: Այդտեղից էլ տար-  
ւողիյուսահատութիւնն է ծագում,  
որը, աչաղին գումարներ կորցնե-

լուց յետո, յանկարծ անելանելի  
վիճակի մէջ է ընկնում: Այս կար-  
գի յաճախակի կրկնող փորձերը  
միանգամայն քամում ու լարում  
են մարդու միտքը և նրան մի տե-  
սակ խելազարութեան են հաս-  
նում: Սովորական զգացումները  
չափազանց թուլանում են այնքան  
անկարեռ ու ընչին բաներ են  
համարում, որ ցնցող զգացումնե-  
րի սովորած խաղամոլը այլ ևս  
չէ կարող նրանցով հետաքըր  
բրւել:

Բարերազդաբար Պիպօի  
հայրը այնպիսի մեծ հարստութիւն  
էր թողել, որ տարւել կամ տա-  
նելը չէին կարող նրա վրա այդ-  
պիսի կորստաբեր ազգեցութիւն  
գործել: Թղթախաղի մէջ զցողը  
նրան աւելի անգործութիւնն էր  
եղել բան թէ մոլութիւնը. բա-  
ցէ դրանից՝ նա դեռ շատ երիտա-

արդ էր, որ անկարելի լինէր ցա-  
ւին դարման տանել նրա անչաս-  
տատ ձաշակն էլ այդ էր ցցց  
տալի: Աւրեմի, նա կարող էր դեռ  
ուղղել եթէ միայն նրա վրա ու-  
շագրութեամբ հսկող լինէր: Հըս-  
կելու կարեռութիւնը Բեատրի-  
չէն էլ շատ լաւ էր հասկացել  
որովհետեւ, առանց իր վարկը կոր-  
ցնելու մասին մտածելու, համար-  
եա թէ ամրոջ օրերով իր սիրե-  
կանի մօտ էր անցկացնում: Միւս  
կողմից՝ մտածելով, որ միօրինակու-  
թիւնից Պիպօն կարող էր ձան-  
ձրանալ կանանց յատուկ, կոկե-  
տութեան ամեն տեսակ միջոցներն  
էր գործ դնում: սանրւելու ձեւ,  
ման գալը, խօսելու եղանակն ան-  
գամ նա միշտ փոխում էր, և վա-  
խենալով, որ չը լինի թէ Պիպօն  
իրենից զըզւի նա ամեն օր նոր ըդ-  
գեստներ էր հագնում: Պիպօն նը-

կատում էր պատերազմական այդ  
փոքրիկ խորամանկութիւնները,  
բայց նա այնքան էլ յիմար չէր,  
որ նեղանար գրանց պատճառով.  
ընդհակառակը, նա ինըն էլ միե-  
նոյն բանն էր անում իր կողմից.  
Նրա տրամադրութիւնն ու ձեւերն  
էլ այնքան շուտ - շուտ էին փոխ-  
ում, ինչպէս և նրա վզի թաշկի-  
նակները: Խոկապէս նա կարիք էլ  
չունէր արւեստական միջոցների  
զիմելու կանանց դուր գալու հա-  
մար. բնութիւնն ինքն էր հող  
տարել այդ մասին: Այդ պատճա-  
ռով էլ նա մի - մի անդամ ատում  
էր ծիծաղելով. „ Խարանածուկը  
մի փոքրիկ ձուկն է, իսկ կապրիզը  
մի փոքրիկ մոլութիւն է:“

Եյսպէս ապրելով ու եր-  
կուսն էլ գւարձութիւնների սիրա-  
հար լինելով: շատ համերաշխ  
կեանք էին վարում մեր սիրահար-

ւածները: Մի բան էր միայն Բեա-  
տրիչէին անհանգստացնում: Ամէն  
անգամ ապագաի մասին կազմած  
իր ծրագրների մասին Պիպօխն խօ-  
սելիս սա բաւականանում էր մի-  
այն ասելով: „ Ամէնից առաջ քո  
պատկերը նկարենք:“

— Իմ ուղածն էլ հենց  
այդ է, պատասխանում էր Բեատ-  
րիչէն, - և արդէն վաղուց է, ինչ  
մենք պայմանաւորել ենք այդ  
մասին: Բայց ի՞նչ ես մտադիր ա-  
նել գրանից յետո: Ափր չէ կարե-  
լի այս պատկերը իցցց զնել հա-  
սարակութեան առաջ, այնինչ ան-  
հրաժեշտ է, սրան վերջացնելուց  
յետո, քեզ հասարակութեանը ծա-  
նօթացնելու մասին մտածել: Ար-  
դեօք դու մտքումդ մի որևէ է նիշը  
ընտրել ես նկարի համար: Խկեղե-  
ցակա՞ն պիտի լինի նկարդ, թէ  
պատմական:

Երբ նա այսպիսի հարցեր  
էր առաջարկում, Պիպօն միշտ մի  
որ և է առիթ էր գտնում նրան չը  
լսելու համար. Օրինակ՝ կամ թաշ-  
կինակն էր գետնից բարձրացնում,  
կամ հաղուստի կոճակն էր ուղ-  
ղում, կամ մի ուրիշ այդ կարգի  
չնչին բան: Բեատրիչէն սկսել էր  
մտածել, թէ դա արտիստին յա-  
տուկ մի գաղտնիք է և թէ Պի-  
պօն չէ ցանկանում հաշիւ տա  
նրան իր ծրագրների մասին, մինչ-  
դեռ Պիպօն նման պարզ մարդ  
հաղի՛ւ թէ կար և նա ոչ մի գաղտ-  
նիք պահել չը գիտէր, նամանա-  
ւանդ իր սիրուհուց, որովհետեւ  
սէր եղած տեղը չէ կարող գաղտ-  
նապահութիւն լինել: Չը լինի՞ թէ  
նա ինձ խարում է, - մտածում էր  
Բեատրիչէն, - ու նրա զիջող վար-  
մունքը մի խաղ է միայն, այնինչ  
նա բոլորովին չի էլ մտածում իր

Խոստումը կատարել  
Այդ կասկածը նրա մեջ մտած ժա-  
մանակ, Բեատրիչէն շատ լուրջ և  
համարեա թէ գոռող կերպարանք  
էր ընդունում: Չեր գրաւոր խոս-  
տումը ես պահել եմ, - ասում էր  
նա. - դուք ինձ հետ մէկ տարով  
պայման էր կապել Այ կը տես-  
նենք, թէ դուք ո՞ր աստիճան  
պատւասէր մարդ էք: Բայց գեռ  
նորա խօսքը չաւարտած, Պիպօն  
բնբշութեամբ համբուրում էր նո-  
րան, կրկնելով. - Ամենից առաջ քո  
պատկերը նկարենք: Յետո Ճար-  
պիկութեամբ խօսակցութեան ա-  
ռարկան փոխում էր:

Դժւար չէ գուշակել թէ  
որպիսի անհամբերութեամբ էր  
Բեատրիչէն սպասում այդ պատ  
կերի վերջանալուն: Վեց շարաթից  
յետո նա վերջապէս աւարտւած  
էր: Երբ վերջին անգամ Բեատրի-

չէն դիրք ընգունեց նկարւելու, նա  
պյնչափ ուրախ էր, որ չէր կարո-  
ղանում չանգիստ նստել. չէնց էն  
է շարունակ մօտենում էր նկարին  
ու հեռանում իր բազկաթոռի վը-  
րա էր նստում և ամեն անգամ  
հիացմբւնքից և ուրախութիւնից  
զանալան ձայներ էր արձակում:  
Պիպօն գանգաղ էր աշխատում և  
երբեմ - երբեմ զլուխը թափա-  
հարում էր: Յանկարծ նա յոնքե-  
րը ժողովեց և, վրձինները մարե-  
լու համար ծառայող փալասի կը-  
տորով մի ակնթարթում, որեց նը-  
կարի երեսը: Բեատրիչէն իսկըն  
նրա մօտ վաղեց և տեսաւ, որ  
պատկերի բերանն ու աչքերը ջըն-  
ջել է: Բեատրիչէն էնպէս յուղ-  
ւեց, որ չկարողացաւ արասու-  
րը պահել այն ինչ Պիպօն, չան-  
դարտ կերպով ներկերը արկղի  
մէջ դարսելով, ասաց. “Հայեացըն-

ու ժպիտը ամենից դժւար է ար-  
տայայտել. նրանց նկարելու հա-  
մար անհրաժեշտ է ներշնչւած  
լինել: Ես զգումեմ, որ ձեռքերս  
բաւականաչափ հաստատ չեն ու չը  
զիտեմ էլ թէ երբ և իցէ նրանք  
կը հաստատե՞ն:”

Այսպիսով պատկերը մնաց  
այլանգակւած, և ամեն անգամ,  
երբ Բեատրիչէն նայում էր այդ  
առանց բերան ու աչքերի զլիին,  
նրա յուղմունքը կրկնապատկը-  
ւում էր:

### VIII

Ինչպէս ընթերցողը նկա-  
տեց, Պիպօն սիրում էր յունական

գինիներ խմելը։ Թէև արեելեան  
գինիները շատախօս չեն, բայց  
լաւ ձաշ ուտելուց յետո, գեսերտի  
ժամանակ Պիպօն սիրում էր բըլ-  
բըլալ։ Բեատրիչէն էլ ամեն ան-  
դամ աշխատում էր խօսակցու-  
թիւնը նկարչութեան մասին դար-  
ձնել բայց հէնց որ այդ մասին  
խօսք էր լինում, Պիպօն կամ բո-  
լորովին լոռութիւն էր պահպա-  
նում և այդ ժամանակ նրա շըլթ-  
ների վրա մի առանձին ժպիտ էր  
երեսում, ինչ Բեատրիչէն չէր սի-  
րուս տեսնել, և կամ արւեստնե-  
րի մասին շատ անտարբեր ու մի  
տեսակ արհամարհանքով էր խօ-  
սում։ Այդ խօսակցութիւնների  
ժամանակ նրա մեջ յաճախ մի շատ  
տարօրինակ միտք էր յղանում։  
" Ի՞նչ գեղեցիկ նկար  
դուրս կգա, ասում էր նա. եթէ  
Հոօմի Կամազ Վակէինօն ներկա-

յացնէի արկի մայր մտած ժամա-  
նակ։ Նկարել մի ընդարձակ հորի-  
զոն, ամայի դաշտ. առջեի մասում  
երեխանները խաղում են աւերակ-  
ների վրա, իսկ երկրորդ մասում  
մի երիտասարդ է տեսնուում ան-  
ցնելիս, քղամիդի մեջ փաթաթւած։  
Նրա երեսը գունտ է, գէմքի նուրբ  
գծագրութիւնը երկար տանջանք-  
ներից այլալւած են. հարկաւոր է,  
որ նրան տեսնողը իսկոյն գուշա-  
կէ, թէ նա շուտով պիտի մեռնի։  
Մէկ ձեռքում նա բռնել է ներկա-  
կալը ու վրձինները, իսկ միւս ձեռ-  
քով յենւած է մի երիտասարդ կը-  
նոջ ուսի վրա, որը ժպտալով գը-  
լուխը այս կողմն է դարձրել։ Այս  
տեսարանը բացադրելու համար,  
անհրաժեշտ է նկարի տակ դնել  
այն թիւը, երբ այդ գէպն է  
պատահել 1520 թւականի աւագ  
ուրբաթ օրը։"

Բեատրիչէն շատ հեշտում  
թեամբ էր հասկանում այդ հանե-  
լուկի միտքը: 1520 թւականի ա-  
ւագ ուրբաթ օրն էր Առափայելը  
մեռել Հռոմում և, չնայած որ շատ  
էին աշխատել պտտող ազմուկը  
հերքել, բայց անհերքելի փաստ  
էր, որ այդ մեծ մարդը իր սիրու-  
հու թեկերի վրա էր հոգին աւան-  
դել: Աւրեմի, Պիպօի նախադաժան  
նկարը պիտի ներկայացներ Առա-  
փայելին մի քանի օր մահից առաջ,  
եւ իրաւի, եթէ այդ տեսարանը  
պարզութեամբ ու իսկական ար-  
տիստի ձեռքով նկարւէր, կարող  
էր շատ գեղեցիկ լինել: Բայց Բեա-  
տրիչէն գիտէր ինչպէս վերա-  
բերել այդ ենթադրած նախա-  
դին ու իր սրբեկանի աչքերի մէջ  
կարգում էր, թէ ինչ է ուզում  
նա դրանով հասկայնել  
2ը նայած որ Կառալիայում

բոլորն էլ միաձայն դաւում էին  
Առափայելի այդ ձեռվ մեռնելու  
համար, բայց Պիպօն, ընդհակառա-  
կը, սովորութիւն ունէր դրւատել  
այդիսի մահը. նա յաճախ ասում  
էր, թէ որչափ էլ մեծ հանձարի  
տէր լինէր Առափայելը, այնուա-  
մենայնիւ նրա մահը աւելի փառա-  
ւոր էր քան նրա կեանքը: Այդ  
միտքը Բեատրիչէն զայրացնում  
էր, թէև նա չէր կարողանում  
ժպիտը պահէլ: 2է՞ որ այդ նշա-  
նակում էր, թէ սէրը աւելի լաւ  
է, քան փառքը, իսկ այդպիսի միտ-  
քը եթէ գուր ըս կայ կնոջը, գո-  
նէ չէ էլ կարող նրան վիրաւորել:  
Եթէ Պիպօն մի ուրիշ օրինակ ըն-  
տրած լինէր, գուցէ Բեատրիչէն  
կը համաձայնէր նրա հետ: „Բայց  
ինչու այդ երկու բանը միմիանց  
հակառակ համեմատութեան դնել  
քանի որ նրանք կարող են իրարու-

շատ լաւյարմարւելասում էր Իեա-  
տրիչէն. սէրն ու փառքը քոյր և  
եղբայր են, ի՞նչու ես ուզում գու-  
նրանց բաժանել:

“Երբէք չէ կարելի երկու  
լաւ բան միաժամանակ անել - պա-  
տասխանում էր Պիտօն: Դու իս  
չես խորհուրդ տալ վաճառականին  
իր հաշիւներն անելու ժամանակ և  
ոտանաւորներ գրել և ո՛չ էլ բա-  
նաստեղծին խորհուրդ կտաս  
նկարչութեամբ պարապել երբ նա  
վանկեր է որոնում: Խնչու ես, ու-  
րեմն, գու ցանկանում, որ ես նը-  
կարեմ, բանի որ սիրահարւած եմ:”

Իեատրիչէն այլ ևս չէր  
իմանում ինչ պատասխանել, որով-  
հետեւ նա չէր համարձակւում ա-  
սել թէ սէրն զբաղմունք չէ:

“Իչ, ուզո՞ւմ ես Ուափա-  
յելի նման մեռնել հարցնում էր  
նա, եթէ ուզում ես, ինչո՞ւ գու-

էլ չէս սկսում անել էնպէս, ինչ-  
պէս նա:

— Ընդհակառակը, պատաս-  
խանում էր Պիտօն. Ուափայելի  
նման չը մեռնելուս համար է, ո՞ր  
չեմ ուզում նրա պէս անել: Ուա-  
փայելը, նկարիչ լինելով, կամ չը  
պէտք է սիրահարւէր, կամ թէ չէ  
սիրահարւած լինելով, չպէտք  
է նկարչութեամբ պարապէր: Այդ  
է պատճառը, որ նա 37 տարեկան  
հասակի մէջ մեռաւ, թէև յիրաւի  
որ փառաւոր վախճան ունեցաւ,  
բայց մաշերի մէջ լաւը չը կա:  
Նթէ նա մի 50 հատ զլուխ - գոր-  
ծոցներ պակաս նկարած լինէր,  
դա մի գժըաղդութիւն կը լինէր  
փափի համար միայն, որը ստիպ-  
ւած պիտի լինէր իր եկեղեցիները  
մի ուրիշի ձեռքով զարդարել բայց  
դրա փոխարէն Գորնարինը մի 50  
համբոյր աւելի ստացած կը լինէր

ու Արականյելն էլ զերծ կը մնար  
իւղաներկի հոտից, որն այնքան  
վնասակար է մարդու առողջու-  
թեան համար:

— Է՛ս, չը լինի թէ ինձ  
էլ ես ուզում Քօրնարին դարձնել  
բացագանքում էր Բեատրիչէն.  
Եթէ ոչ փառքիդ, ոչ կեանքիդ  
մասին ես գու հոդ տանում, ու-  
զո՞ւմ ես, որ ես քու սաւանը կա-  
րեմ:

— Ճիշտն ասելով՝ չէ, պա-  
տասխանում էր Պիպօն, - բաժակը  
ըերանին մօտեցնելով. Եթէ ես  
կարողանայի քեզ կերպարանա-  
փոխել Ստաֆիլէ կը դարձնէի  
քեզ):<sup>\*</sup>

2ը Նայած որ Պիպօն խօ-

\*) Ստաֆիլն այն յաւերժա-  
հարսն էր, որի վրա Բախունն էր սիրահար-  
ուել և որին նա կերպարանափոխեց խաղողի  
ողկոյզի: Ծ. չ.

սակյութեանը թեթև ձև էր տալիս,  
բայց նա այնչափ էլ կատակ չէր  
անում, ինչպէս որ կարելի էր  
կարծել: Կարա կատակների մեջ մին-  
չև իսկ մի շատ իրաւացի միաբ  
կար մանգնւած, և աչա թէ իս-  
կապէս ինչ էր մտածում նա:

Արևստագիտութեան պատ-  
մութեան մեջ շատ անգամ են խօ-  
սել այն մասին, թէ որպիսի գիւ-  
րութեամբ էին կատարում մեծ  
արտիստներն իրենց գործերը, և  
օրինակներ են բերւած այնպիսի-  
ները, որոնք կարող են եղել թէ  
լաւ աշխատել և թէ անկանոն ու  
ծոյլ կեանք վարել: Բայց գրանից  
էլ մեծ սխալ չը կա: Անկարելի  
բան է, որ փորձւած նկարիչը, որը  
վստահ է իր ձեռքի ու համբաւի  
վրա, կարողանա յաջողութեամբ  
մի զեղեցիկ գործ նկարել այն ժա-  
մանակ, երբ նա զւարձութիւնների

և հաճոյըների յետևիցն է ընկած։  
Ասում են, որ Աբնչին մի-մի ան-  
դամ նկարում էր քարը միւս ձեռ-  
քին բռնած։ բայց Զոկոնդի հոչա-  
կաւոր պատկերը չորս տարի մնաց  
նրա նկարակալի վրա գրւած։ Եյդ-  
պիսի հազւագիւտ գործերը մի կող-  
մը թողած, որոնք, ի հարկե, միշտ  
պարծանքի առարկա են եղել յայտ-  
նի բան է, որ իսկական գեղեցիկ  
նկարները միշտ երկար ժամանակի  
ու խորասուլած մտքի արգիւնը  
են եղել և ձշմարիտ հանձարը չէ  
կարող առանց համբերութեան  
լինել։

Պիպօն համոզւած էր այդ  
օրէնքի մէջ և իր հօր օրինակն էլ  
աւելի էր համտատել նրա մէջ այդ  
կարծիքը։ Եւ յիրաւի, զուցէ երբէք  
այնպիսի մի յանդուգն նկարիչ չէ  
եղել ինչպիսին էր Տիցիէնը,  
եթէ չչաշւենք նրա աշակերտ

Ոռութէնսին։ Բայց որչափ Տիցիէնի  
ձեռքը աշխոյժ էր, այնքան էլ նրա  
միտքը համրերատար էր։ Իր ապ-  
րած ցց տարւա ընթացքում նա  
շարունակ իր արւեստով էր պա-  
րապում։ Իր նկարչութեան սկիզբ-  
ներում նա սկսել էր մանրակըր-  
կիտ զգուշութեամբ և չոր ու ցա-  
մար նկարել որի շնորհով նրա  
աշխատութիւնները նմանում էին  
Ալլերտ Դիւրէ-ի գոթիկական  
նկարներին։ Երկար աշխատու-  
թիւններից յետո միայն, նա համար-  
ձակւեց իր հանձարին հպատակւել  
ու աղատութիւն տալ իր վրձինին-  
գեռ պատահում էլ էր, որ նա եր-  
բեմն զգջում էր այդ մասին, ու  
այնպէս եղաւ, որ Միքել—Անջը,  
Տիցիէնի մէկ նկարը տեսնելով՝  
ասաց թէ շատ ցաւալի է,  
որ Աւենետիկում նկարչութեան  
սկըզբունքներին նշանակութիւն

չեն տալիս այնքան:

Այս արածս պատմութեան  
ժամանակներին՝ Վենետիկում մի  
շատ զաւալի թեժեւ վերաբեր-  
մունք էր թագուլորում, ինչ ար-  
ևստների անկման առաջին նշանն  
է միշտ: Պիպօն շատ հեշտութեամբ  
ու շուտ կարող էր իր համար հըռ-  
չակ հանել շնորհիւ իր մեծ անւան,  
փոքր ինչ յանդգնութեան և իր  
ստացած ուսման, բայց չէնց այդ  
պատճառով էլ նա այդ բանը չէր  
ցանկանում: Նա ամօթ էր համա-  
րում հասարակութեան տղիտու-  
թիւնից օգտւելը և շատ իրաւացի  
կերպով մտածում էր, թէ ձարտա-  
րապետի որդին չպէտք բանդի  
իր հօր շննածը. իսկ եթէ Տիցիէնի  
որդին նկարիչ գառնա, նրա պար-  
տականութիւնն է թոյլ չտալ  
որ նկարչութիւնը իր բարձրու-  
թեան աստիճանից ընկնի:

Բայց այդպիսի մի պարտա-  
ւորութիւն իր վրայ առնելով, նա,  
ի հարկէ, պէտք է իր ամբողջ  
կեանքը այդ բանին նորէր: Յա-  
ղողութիւն կունենա՞ր արդեօք.  
այդ յայտնի չէր: Մէկ մարդը  
շատ չնչին ոյժ է ներկայա-  
ցնում, երբ նրա գէմ պատերազ-  
մողը ամբողջ զարն է. բազմու-  
թիւնը նրան այնպէս է քաշտալի,  
ինչպէս ուժեղ յորհանքը լուսորին:  
Ինչ կարող էր, ուրեմն, դուրս զալ  
այդ պատերազմից. Պիպօն իր վե-  
րաբերեալ չէր կուրանում. նա նա-  
խատեսում էր, որ իր ոյժերը  
շուտ թէ ուշ կը թուլանան ու  
ինքը դարձեալ նախկին զւարձու-  
թիւննը իր յետելից կընկնի: Ուրե-  
մն, նրա գոհողութիւնը իջուր պի-  
տի անցնէր, կուզէ այդ գոհողու-  
թիւնը կատարեալ լինէր, թէ թե-  
րի, և դրանից ինչ արդիւնք նա

կարող էր ստանալ նա այժմ ջահիլ էր, հարուստ, առողջ և մի գեղցիկ էլ սիրուհի ունէր. երջանիկ ապրելու և այս բոլորից յետոյ ոչ ոքից նկատողութիւն չը լսելու համար, նրան մնում էր միայն թողնել, որ արեք ծագի ու մայր մտնի: Նրա ինչի՞ն էր պէտք այսչափ բարիքներից հրաժարել մի ինչ որ կասկածելի փառքի պատճառով, որին կարող էր նա իսկի չը հասնել էլ:

Այս բոլորի մասին շատ լուրջ մտածելուց յետոյ էր, որ Պիպօն մի տեսակ անտարբերութեան մէջ էր ընկել, որը կամաց կամաց մի բնական բան էր դառել նրա համար: , Եթէ մի քսան տարի էլ սովորեմ, ասում էր նա, և եթէ փորձեմ հօրս նմանել, ես պիտի խուլերի առաջ երգող դառնամ. իսկ եթէ ոյժս չը պատի, հօրս անունը

պիտի անպատւած լինեմա և իր սովորական անհոգութեամբ նա եղրակացնում էր իր միտքը, բացազանչելով, Սատանէն տանի նըկարչութիւնը. կեանքը չափականց կարձ է: "

Մինչ նա վիճում էր Բեատրիչէի հետ, պատկերն էլ մնացել էր իր տեղում չը վերջացրած: Պիպօն մի օր պատահմամբ Սերվետների վանքը մտաւ: Մատուոի մէջ շինւած բարձրավանդակի վրա Մարկօնի որդի Անեչելիօնին նա նըկատեց: Դա հէնց այն մարդն էր, կատեց: Դա հէնց այն մարդն էր, որը, ինչպէս քիչ վերեռմ ասացի, իրեն էլ Տիցիանելո էր անւանում: Այս երիտասարդը ոչ մի չիմնաւոր պատճառ չունէր այդ անունը կը րելու, եթէ չը հաշւենք այն, որ նա Տիցիէնի հեռաւոր ազգականն էր ու կնունքի անունն էլ Տիտօն էր, ինչ Տիցիէնի էր վերածել իսկ

Տիցիէնից էլ Տիցիանելօի, որի շը-  
նորհով Անսեսիկի բաց բերաննե-  
րը նրան ընդունումէին իրաւ մծ  
նկարչի հանձնարը ժառանգողի  
ու սաստիկ ոգեորում էին նրա  
տամկանկարների առաջ: Պիպօն  
առաջ երբէք չէր հետաքրրւել  
այդ ծիծաղելի խարդախ մարդով.  
բայց այս վայրկեանին, կամ այդ  
անձնաւորութեան հետ երես առ  
երես պատահելը դուր չեկաւ նրան,  
կամ թէ սովորականից աւելի լըր-  
ջութեամբ իր վարձը զնահատելու  
պատճառով, նա մօտեցաւ բար-  
ձրաւանդակին, որը շատ անհաս-  
տատ սիւների վրա էր ամրացրած,  
և մի աբացի խփելով այդ սիւնե-  
րից մէկին, վայր զցեց: Բարերազ-  
դաբար բարձրաւանդակը իսկոյն  
վայր չնկաւ, այլ այնպէս ճռճւեց,  
որ կեղծ Տիցիանելօն նախ հար-  
բածի նման օրօրւեց, յետոյ, հա-

ւասարակշռութիւնը կորցնելով  
ընկաւ իր ներկերի մէջ ու շատ-  
ղարմանալի կերպով լղովեց նը-  
րանցով:

Եյլւս դժւար չէ երեակա-  
յել թէ ինչպէս բարկացած էր նա  
երբ տեղիցը վեր կացաւ: Նա իս-  
կոյն վայր իջաւ բարձրաւանդա-  
կից և Պիպօնին մօտեցաւ հայհը ելում:  
Վյն վայրկեանին, երբ նրանք սուր-  
բերն էին մերկացնում սբրավայրի  
մէջ, մի քահանա նրանդ մէջտեղը  
նետեց բաժանելու, աղօթողներից  
աւելի կրօնամոլները սկսեցին  
գուրս փախչել վախեցած, երեսնե-  
րին շուտ—շուտ խաչակնքելով:  
իսկ աւելի հետաքրրիքները շտա-  
պեցին շրջապատել նրանց: Տիտոն  
բարձր ճայնով աղաղակում էր, թէ  
այդ մարդը ուղումէր իրեն ըս-  
պանել ուստի նա արդարութիւն  
էր պահանջում. վայր զցած սիւնն

Էլ այդ եղեռնագործութեան ապացոց էր: Ներկա եղողներն սկսել էին իրարանցումի մեջ ընկնել և նրանցից մեկը, որ միւսներից աւելի համարձակ էր, ուզեց Պիպօի օձիքը բռնել: Պիպօն, որը բոպէտական բարկութեան աղեցութեան տակ էր այդպէս վարւել և այժմ ծիծաղով էր նայում այդ բոլոր տեսարանի վրա, տեսնելով, որ ինքը բանտ տարւելու վասնզի մեջ է գտնւում և որ իրեն մարդասպան են անւանում, բարկութիւնից կատաղեց: Իրեն ձերբակալողին մի կողմ հրելուց յետո, նա Տիտօի վրայարձակւեց:

Այդ բեկ պէտք է, - զուցեց նա, Տիտօին բռնելով, - բեկ պէտք է օձիքից բռնել ու Սուրբ Մարկօսի հրապարակը տանել կախելու իրբ գող—աւաղակի: Դու զիտե՞ս, ում չետ ես խօսում, անունների

յափշտակի՞չ: Ես կոչում եմՊօմպօնի Անելիո, Տիցիէնի որդի: Քիչ առաջ բո փթած հիւղին ես աբացի խփեցի, բայց եթէ իմտեղ հայրս լինէր, հաւատա, որ Տիցիանելու անունը կրել սովորեցնելու համար, նա բեկ այնչափ կըտրորէր բարձրաւանդակի վրա, որ դու այնտեղից փթած ինձորի պէս վայր կընկնէիր: Բայց զործը գրանով չէր վերջանա. արժանի վարձատրութիւնը բեկ տալու համար, նա ականջիցդ կը բռնէր, այ դու անամօթ աշակերտ, և բեկ կըտանէր այն արհեստանոցը, որտեղից դու փափել ես, գեռ մի շնորհըով զլուխ նկարել չսովորած: Խնչ իրաւունքով ես դու աղտոտում այս վանքի պատերը և ի՞նչպէս ես համարձակւում իմ անունը բոտամկանկարների տակ դնել: Կորի՛ր նախ անատօմիա սովորիր և մի

տասը տարի մարտի մկանունքներ  
նկարելով զրադշիր, ինչպէս ես  
եմ արել իմ հօր մօտ, և  
այն ժամանակ մենք կը տեսնենք,  
թէ ո՞վ ես դու և կամ թէ ար-  
գե՞օք դու արժանի՞ ես անուն ու-  
նենալու, թէ ո՞չ իսկ մինչև այդ ժա-  
մանակը դու չը համարձակես քեզ  
սեպչականացնել այն, ինչ ինձ է  
պատկանում, եթէ ոչ կը վերցնեմ  
ու քեզ ջրանցքի մէջ կը նետեմ, որ  
մի անդամից ընդ միշտ դու մի լաւ  
մկրտւես: "

Այս խօսքերի վրա Պիպօն  
եկեղեցուց դուրս եկաւ: Հենց որ  
ամբոխը լսեց նրա անունը, իսկոյն  
հանդարտւեց. նրանք յետ քաշւե-  
ցին Պիպօն ճանապարհ տալու  
համար և չետաքբրութեամբ նա-  
յում էին նրա յետեկից. Սա եկե-  
ղեցուց ուղղակի փոքրիկ տունը  
փափառ, որտեղ Բեատրիչէն ըս-

պասում էր նրան: Առանց այդ միջ-  
նադէպի պատմութիւնը անելու  
համար ժամանակ կորցնելու, նա  
վերցրեց ներկակալը և, դեռ բար-  
կութիւնից յուղած, նստեց պատ-  
կերի վրայ աշխատելու:

Դեռ մի ժամ չանցած,  
պատկերը վերցացած էր: Նկարի  
մէջ նա միաժամանակ ուրիշ փո-  
փոխութիւններ էլ մտցրեց. ամե-  
նից առաջ նրա ամենաաննկատելի  
մանրամասնութիւններն ուղղեց.  
զգեստներին աւելի ազատ դիրք տը-  
ւեց, ֆօնը և կողմանակի առարկա-  
ները ըետուշ արեց, որոնք շատ  
կարեոր տեղ են ըստում վենե-  
տիկեան նկարչութեան մէջ: Այդ  
ըոլորից յետոյ նա սկսեց բերանն  
ու աչքերը նկարել և վրձինի մի  
քանի հարւածով յաջողեց ցանկա-  
ցած արտայայտութիւնը տալ նը-  
րանց: Աչքերը բաղցը և հպարտ

արտայայտութիւն էին կրում,  
շըմները, որոնց վերեի մասում  
մի թեթև աղուամազ էր երեւմ,  
կիսարաց էին. ատամները մարգար-  
տի նման փայլում էին և, կարծես  
թէ, չէնց հիմա խօսրը պիտի դուրս  
թռչէր բերանից:

Թագավորւած Աւեներա  
չես կոչէի դու, ասաց Պիպօն, երբ  
ամեն լան վերջացրած էր, այլ  
կոչես սիրահարւած Աւեներա:

Թժւար էր զռչակել Բնեա-  
տրիչէի ուրախութիւնը. մինչ  
Պիպօն աշխատում էր, հաղիւ էր  
նա համարձակում շունչ բաշել:  
Պիպօն համբուրեց և, հարիւր ան-  
գամնրան շնորհակալութիւն յայտ-  
նելուց յետոց, ասաց, թէ ինքը  
այլևս չէ ցանկանում նրան Տիցի-  
անելո անւանել, այլ Տիցիէն: Օ-  
ւաց միւս մասը նա անդադար այն  
անհամար գեղեցկութիւնների մա-

կրկնում։ Եւ այսպիսով մինչեւ իր  
մահը նա հաւատարիմ՝ մնաց իր  
ծուլութեանը, իսկ Բեատրիչէն էլ  
ասում էն, հաւատարից մնաց իր  
սիրո մէջ։ Երկար ժամանակ նը-  
րանիր ազգեցին իրքեւ ամուսիններ,  
և ցաւալի է, որ պյու բացայատ  
միութիւնից վիրաւորւած, Կորե-  
գանների հպարտութիւնը ոչնչա-  
ցրել էր Բեատրիչէի նկարը, ինչ-  
պէս որ պատսհարը ոչնչացրեց  
Տիգիանելոի առաջին նկարը<sup>\*\*</sup>)

\*). Խնչակս այս, նպանակս և վեպի-  
կիս նախորդ ոստանաւորի, թարգմանութիւն-  
ները մեր երիտասարդ բանաստեղծ Պ. Զ.  
Բալովուղեանին են: Ծ. թ.

\* \*) Նկարների սերահար հռչակա-  
որ N. Թօգլին-ի հևատագութիւնների  
շնորհած է, որ իմացել է, թէ այդ նկարը  
գոյութիւն է ունեցել Ծ.Հ.



ԱՏՐՊԵՏԻ ԵՐԿԵՐԸ ԺԱԼՈՒՅՄ ԵՆ

• 194 •

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

**ՊԱՏԿԵՐՆԵՐ** Տար Պատ. թբահայերի կետնից.  
Վեհապետական գործադրություն

вы не пытаетесь убедить меня

0.1.0008 G. 500000 614

**ԶԱԻՐԱԴՐ** Ալեքսանդր Մուս - Թուրք. կույց արևա-

**ՎԱՐՈՒԹՅՈՒՆ** Եւկո վեալ Թրտանայեթի կեանից,  
**ՇԵ-ԺԱՌԵ-ԵՐԲՔ** պատկենեմ Տանկանայոց կեանից  
**ԿԱՐԵԱ-Ի և ՄԻՐԵԱ** պատմական վեալ

ԱՄԷՆ ՄԻ ՀԱՏՈՐԸ մէկ քք. կամ հինգ դո.

Ընտառ բարի վրա իւրաքանչիւր նս. երկու րը.տասը դռ.

ԽԵՆ - ԿԱՐԱՊԵՏ ԹՐԻՎԻ, կեանիցից մի բան:

ԳՈՐԾ . ԵՂԻԿԻ ԵԽԸ ԵՒՆՈՒՑ Կ. ԵՒՆՈՒԾԻ ԾԻ.

**ՇԽԱՑ** եւս եռեալ կ. եռեալ տի.

**ԺԱՌԱՆԴԻՆԵՐ եւս ԵՎԵԿՈՒՅԻ կ. ԵՎԵԿՈՒՅԻ օհ.**

ԵՐՈ. ԱՆԴՐԱՎԵԼ Տառերինելիք կ.

ԳՐԱՆՔ 15 ԱՊՐ. ԿԵՄ 15 ՇՈՀԹ

977

ՀՀ Ազգային գրադարան



NL0302000

6707